ԻՆՉՊԵՍ ԽԹԱՆԵԼ ՆԵՐԱՌՈՒՄԸ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Խորհուրդներ ուսուցիչներին

Մեթոդական ուղեցույց
Ձեռնարկ

ՀՄԿ

unicef

unicef

յուրաքանչյուր երեխայի համար

Սույն ձեռնարկը ստեղծվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Ներկայացված տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտահայտեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները և քաղաքականությունը:
ՅՈՒՆԻՍԵՖ-ն աշխատում է, որպեսզի Հայաստանում յուրաքանչյուր երեխա լինի սիրված, սնված և խնամված:
Հիմնվելով 75-ամյա միջազգային փորձի և Հայաստանի երեխաների համար 25 տարվա հաջողությունների վրա՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ը պարտավորություն է ստանձնում բարելավելու ամենախոցելի՝ աղքատության և մեկուսացման մեջ ապրող երեխաների կյանքը:
Ստեղծման պահից ի վեր՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ն ամբողջությամբ ֆինանսավորվում է անհատների, մասնավոր հատվածի, հիմնադրամների և կառավարությունների կամավոր նվիրատվություններով:

Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի գործունեությանը ծանոթանալու համար այցելեք www.unicef.am և www.babycef.am կայքերը:

ԻՆՉՊԵՍ ԽԹԱՆԵԼ ՆԵՐԱՌՈՒՄԸ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Խորհուրդներ ուսուցիչներին

Մեթոդական ուղեցույց
Ձեռնարկ



Երևան – 2021

Ինչպես խթանել ներառումը հեռավար ուսուցման պայմաններում: Խորհուրդներ ուսուցիչներին: Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ. - Եր.: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2021 - 56 էջ

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել ԿԳՄՍ նախարարության կողմից

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից

Մասնագիտական խմբագիր՝ մ.գ.թ., դոցենտ Սվաջյան Ա.Հ.

Գրախոսներ՝
մ.գ.թ., դոցենտ Ազատյան Թ.Յու.
հ.գ.թ., Մանուկյան Ա.Տ.

Հեղինակներ՝
Սվաջյան Ա.Հ.
Ադամյան Հ.Ա.
Գարեգինյան Ա.Ա.
Հակոբյան Լ.Գ.
Մարգարյան Լ.Հ.

Լուսանկարների հեղինակ՝
Ադամյան Հ.Ա.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

5 **ՆԱԽԱԲԱՆ**

8 **ՄԱՍ 1.**
Արդյունավետ հեռավար ուսուցման նախապայմանները

9 Ինչպես նախապատրաստվել հեռավար ուսուցմանը

13 Ինչպես իրականացնել հեռավար ուսուցումը

17 Ինչպես համագործակցել ծնողների հետ հեռավար ուսուցման պայմաններում

19 **ՄԱՍ 2.**
Հեռավար ուսուցման առանձնահատկությունները ներառման համատեքստում

20 Հեռավար ուսուցումը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան

25 Ինչպես օգնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին անցնել հեռավար ուսուցման

25 Ինչպես օգնել աուտիստիկ սպեկտորի խանգարումներ ունեցող երեխաներին անցնել հեռավար ուսուցման

29 Ինչպես օգնել լսողության խանգարումներ ունեցող երեխաներին անցնել հեռավար ուսուցման

34 Ինչպես օգնել տեսողության խանգարումներ ունեցող երեխաներին անցնել հեռավար ուսուցման

39 Ինչպես օգնել շարժունակության խանգարումներ ունեցող երեխաներին անցնել հեռավար ուսուցման

41 Ինչպես օգնել մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաներին անցնել հեռավար ուսուցման

43 Ինչպես օգնել ուշադրության պակաս և գերակտիվության համախտանիշ ունեցող երեխաներին անցնել հեռավար ուսուցման

46 Ինչպես օգնել խոսքի և հաղորդակցման խանգարումներ ունեցող սովորողներին անցնել հեռավար ուսուցման

48 **ՄԱՍ 3.**
Ինչպես վերադառնալ դպրոց համավարակի պայմաններում

49 Սանիտարահիգիենիկ պայմանների պահպանումը որպես անվտանգ աշխատանքի գրավական

52 Ինքնախնամքը որպես ուսուցչի ներդաշնակ աշխատանքի միջոց

54 **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

ՆԱԽԱԲԱՆ

2020 թվականի մարտին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) հայտարարեց ՔՈՎԻԴ-19-ով պայմանավորված համավարակ և հորդորեց աշխարհի երկրներին միջոցներ ձեռնարկել վիրուսի տարածումը նվազեցնելու համար: ՔՈՎԻԴ-19 համավարակն էական և լուրջ ազդեցություն է ունեցել ամբողջ մարդկության, և հատկապես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների և նրանց ընտանիքների կյանքի վրա: Պայմանավորված ՔՈՎԻԴ-19 համավարակով՝ 2020 թվականի մարտի 15-ից ՀՀ-ում կրթությունը կազմակերպվում է հեռավար տարբերակով:

Հեռավար ուսուցումը կրթության համակարգված գործընթացի ինքնուրույն ձև է, որի ընթացքում ուսուցչի և սովորողի միջև փոխհարաբերություններն իրականացվում են հեռահաղորդակցման միջոցով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ: Հեռավար ուսուցման ընթացքում կարևոր է ոչ միայն տեղեկատվական տեխնոլոգիաների և համացանցի առկայությունը, այլև՝ ուսուցման գործընթացի ճիշտ և արդյունավետ կազմակերպումը, որն իրականացվում է ուսուցչի կողմից [1]:

Պարտադրված հեռավար կրթության անցնելն իր հետ բերեց մի շարք խնդիրներ ինչպես ուսուցիչների, այնպես էլ սովորողների ու ծնողների համար: Ուսուցման գործընթացին արդյունավետ մասնակցելու համար կարճ ժամանակահատվածում նրանք պետք է լուծեին այդ խնդիրները.

- կիրառել տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների տարբեր գործիքներ և ծրագրեր, տեխնիկական միջոցներ (հեռախոս, համակարգիչ), ընտրել դրանցից ամենաարդյունավետ տարբերակները և հմտորեն օգտվել,
- հեռավար դասի ընթացքում ապահովել լիարժեք մասնակցություն,
- ուսումնական նյութի և առաջադրանքների կիրառումը հարմարեցնել հեռավար պայմաններին,

- չկորցնել կապը մանկավարժների հետ և ինտերնետ կապ ապահովել ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակ,
- նոր ձևաչափով ներկայացվող առաջադրանքների և հանձնարարությունների իրականացման համար ունենալ բավարար կարողություններ,
- պահպանել տեխնիկական տարբեր միջոցներից օգտվելու կանոնները,
- արդյունավետ կառավարել ժամանակը,
- հուզականորեն կայուն մնալ բացասական տեղեկատվությամբ ողողված առօրյայի պայմաններում,
- ընդունել, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար իրենց սովորական կյանքի պայմանների կտրուկ փոփոխությունը կարող է առաջացնել լարվածություն և դժվարություններ, հետևաբար համբերատար աջակցել երեխաներին հարմարվել նոր պայմաններին,
- անընդհատ լինելով որոշակի փակ տարածքում և նույն մարդկանց հետ՝ կարողանալ բոլորի հետ պահպանել դրական և վստահելի փոխհարաբերություններ [27]:

Հայալեզու թվայնացված գրականության սակավությունը, անբավարար նյութատեխնիկական բազան, հեռավար տարբերակով աշխատելու ոչ լիարժեք կարողությունները, ներթիմային և ծնողների հետ աշխատանքի անբավարար փորձն ու կարողությունները խոչընդոտ դարձան ուսուցման գործընթացի արդյունավետ իրականացման համար: Հեռավար կրթության պայմաններում առավել խոցելի է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպումը:

Իսկ ինչպե՞ս պետք է գործեն ուսուցիչները, երբ անհրաժեշտություն է առաջացել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթությունը կազմակերպել հեռավար՝ տան պայմաններում: Հեռավար կրթության ժամանակ կրթության առանձնահատուկ

պայմանների կարիք ունեցող երեխայի ուսումնառության գործընթացն իրականացնելիս պետք է հաշվի առնել յուրաքանչյուր երեխայի տարիքային և հոգեբանական զարգացման առանձնահատկությունները, նախասիրություններն ու հնարավորությունները: Այն դեպքում, երբ երեխան ունենում է զարգացման որոշակի առանձնահատկություններ, հեռավար ուսուցման արդյունավետ կազմակերպման և իրականացման գործընթացում ուսուցիչներն էլ ավելի շատ խոչընդոտների են բախվում: Այդ խոչընդոտները հնարավոր է հասցնել նվազագույնի, երբ ուսուցիչը նախապես զինվում է անհրաժեշտ ռեսուրսներով, պլանավորում է դասի ողջ ընթացքը և դարձնում այն առավել ինտերակտիվ [1]:

Հեռավար ուսուցման անհրաժեշտությունը պայմանավորված էր ՔՈՎԻԴ-19 համավարակով և դարձավ դարի մարտահրավեր. մարտահրավեր, որը հնարավորություն տվեց ձևավորելու և զարգացնելու ինչպես սովորողների, այնպես էլ ուսուցիչների տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ կրթության գործընթացին մասնակից լինելու արժեքավոր կարողություններ ու հմտություններ: Հեռավար կրթության հմտությունները հնարավորություն կտան հետագայում էլ հաղթահարելու տարբեր պատճառներով կրթության շարունակականության հետ կապված խնդիրները:

Սիրելի՛ ուսուցիչ, հետևելով ստորև ներկայացված խորհուրդներին, կարող եք կազմակերպել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթությունը՝ ապահովելով դրա շարունակականությունը:

Ամեն օր,
նույնիսկ ամեն ժամ
մենք որևէ նոր բան ենք սովորում, զարգանում ենք,
ստեղծագործում, լուծումներ փնտրում,
ձախողվում և նոր լուծումներ գտնում:

Եթե կարծում եք, որ Ձեր ներսում ապրում է
լուծումներ փնտրելու, բացահայտումներ անելու,
ստեղծագործելու, թիմում աշխատելու և
մշտապես զարգանալու արվեստը, ապա
ուսուցչի մասնագիտությունը
հենց Ձեզ համար է:

ՄԱՍ 1

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Համավարակով պայմանավորված՝ հեռավար ուսուցումը դարձավ ուսուցման հիմնական տարբերակ ամբողջ աշխարհում: Ինչպես բոլոր երկրներում, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունում, ուսումնական հաստատությունները դեռևս պատրաստ չէին դրան: Սակայն գործընթացի մեկնարկը տրված էր և աշխատանքները պետք է իրականացվեին կրթության շարունակականությունն ապահովելու համար: Այս փոփոխությունը նոր մարտահրավեր է սովորողների, նրանց ծնողների և ուսուցիչների համար: Կրթության գործընթացի մասնակից և շահագրգիռ կողմերի համառ ջանքերի արդյունքում շատ խոչընդոտներ հաղթահարվեցին: Այնուամենայնիվ, որոշ խոչընդոտներ դեռևս առկա են և եթե դրանք հաղթահարվեն, հեռավար ուսուցումը հնարավոր կլինի կիրառել նաև համավարակի հաղթահարումից հետո՝ որպես ցածր հաճախելիություն ունեցող կամ տնային ուսուցում ստացող երեխաների կրթության շարունակականության ապահովման միջոց:

Իսկ ինչպե՞ս նախապատրաստվել հեռավար ուսուցմանը, հատկապես, եթե դասարանում ունեք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներ [12]:

Ինչպես նախապատրաստվել հեռավար ուսուցմանը

Նախապատրաստվեք ինքներդ և նախապատրաստեք ծնողներին

Նախևառաջ, Դուք՝ որպես ուսուցիչ, պետք է ծանոթանաք հեռավար և առցանց ուսուցման ձևաչափերին, ուսումնասիրեք տեղեկատվական հեռահաղորդակցական այն տեխնոլոգիաների հնարավորությունները, որոնք արդյունավետ է կիրառել հեռավար ուսուցման ժամանակ: Կապ հաստատեք սովորողի ծնողների հետ՝ տեղեկանալով նրա առողջական վիճակի մասին: Ծնողի և մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամների հետ քննարկեք և պարզեք, թե ինչ է անհրաժեշտ տվյալ սովորողի հեռավար կրթության կազմակերպման համար, ինչ առանձնահատկություններ պետք է հաշվի առնել: Ճշտեք, թե ինչպիսի տեղեկատվական հեռահաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններ կան ընտանիքում, դրանցից որոնք կարող է օգտագործել երեխան և հասանելի է արդյոք ինտերնետ կապը տանը: Այս ընթացքում ուշադրության կենտրոնում

պահեք հատկապես կրթությունից դուրս մնացող, հաճախակի բացակայող կամ ծնողների կողմից ոչ բավարար ուշադրության արժանացած երեխաներին. անհրաժեշտ տեխնոլոգիաների բացակայության դեպքում ահազանգեք համապատասխան կառույցներին կամ գործընկեր կազմակերպություններին: Ուսուցման գործընթացը սկսելուց առաջ համոզվեք, որ սովորողն ունի գործող էլեկտրոնային հասցե և հնարավորություն՝ օգտվելու դպրոցի կողմից կիրառվող էլեկտրոնային հարթակներից (Zoom, Google classroom, Microsoft Teams և այլն) [1; 7]:

Հետևեք արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը

Հեռավար ուսուցման պայմաններում կրթության արդյունավետության ապահովման համար կարևոր է, որպեսզի սովորողը տանն ունենա իրեն տրամադրված հատվածը, որը նրա համար կդառնա ուսումնական միջավայր: Խոսեք այդ մասին ծնողների հետ և օգնեք նրանց այդ միջավայրի ստեղծման հարցում՝ հաշվի առնելով երեխայի զարգացման առանձնահատկությունները: Հատկացված ուսումնական միջավայրում անհրաժեշտ է ապահովել գույքի հարմարավետ դասավորվածություն, համապատասխան լուսավորություն, ուսումնական նյութերի առկայություն:

Կազմեք ժամանակացույց

Խրախուսեք ծնողներին (հնարավորության դեպքում՝ նաև սովորողին) երեխայի համար ամենօրյա գործողությունների և ուսումնական գործընթացի օրակարգ կազմելու և դրան հետևելու համար: Սովորողի օրակարգն առավել արդյունավետ կազմակերպելու համար ծնողին տրամադրեք դասերի և պարապմունքների հնարավորինս

հստակ գրաֆիկ, որտեղ նշված կլինեն աշխատանքների իրականացման օրը, ժամը և տևողությունը: Հիշեցրեք ծնողին, որ երեխայի օրակարգում պետք է ներառել նաև հանգստի և նախընտրած գործունեությամբ զբաղվելու ժամանակահատված [20]:

Վերազինվեք ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներով

Ընդլայնեք հեռավար ուսուցման համար անհրաժեշտ ռեսուրսների ցանկը՝ ստեղծելով տեսագրություններ, ձայնագրություններ, տեսանյութեր, սահիկահանդեսներ, թեստեր և այլն: Առցանց դասերն առավել արդյունավետ դարձնելու համար սկանավորեք կամ լուսանկարեք ուսումնական տեքստերը, քարտերը, նկարները, անհրաժեշտության դեպքում՝ պարզեցրեք կամ մեծացրեք չափերը: Հիշեք, որ Ձեր կողմից կիրառվող նյութերը պետք է հասանելի լինեն յուրաքանչյուր սովորողի համար:

Կազմակերպեք հեռավար քննարկումներ

Համագործակցությունն արդյունավետ ուսուցման կարևորագույն պայմաններից մեկն է՝ անկախ ուսուցման կազմակերպման ձևից: Հեռավար ուսուցման պայմաններում հաճախակի քննարկումներ կազմակերպեք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի հետ աշխատող ուսուցիչների և աջակցության ծառայություններ մատուցող մասնագետների հետ: Դա հնարավորություն կտա միասին վերլուծել երեխայի ձեռքբերումները, դժվարությունները և մշակել նոր արդյունավետ ռազմավարություններ: Աշխատանքներն առավել արդյունավետ իրականացնելու համար այդ գործընթացում ներառեք նաև ուսուցչի օգնականներին [28]:

Հիշեք անհատական ուսուցման պլանի մասին

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության արդյունավետ կազմակերպումն ու մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրումը հեռավար կրթության պայմաններում ավելի դժվար է: Անկախ այն հանգամանքից, թե ինչ ձևաչափով է իրականացվում կրթությունը,

կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները շարունակում են ունենալ իրենց անհատական ուսուցման պլանը, որով պետք է առաջնորդվել ուսուցման ընթացքում: Երբեմն կարող է անհրաժեշտություն առաջանալ վերանայելու անհատական ուսուցման պլանով սովորողների համար նախատեսված ծրագրային և/կամ միջավայրային հարմարեցումները՝ հիմքում ընդունելով հեռավար ուսուցման կազմակերպման և սովորողի առանձնահատկությունները: Այդ իսկ պատճառով ուսուցիչների, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող մասնագետների և, հատկապես, ծնողների միջև համագործակցության դերն այս ընթացքում էլ ավելի է կարևորվում: Համագործակցելով ծնողի և աջակցող մասնագետների հետ՝ կարող եք արժեքավոր տեղեկատվություն ստանալ երեխային անհրաժեշտ հարմարեցումների մասին [20]:

Ինչպես իրականացնել հեռավար ուսուցումը

Դասը պլանավորեք սովորողի կարողություններին համապատասխան

Իրատեսորեն գնահատեք սովորողների մասնակցության հնարավորությունները հեռավար ուսուցման պայմաններում: Օրվա դասացուցակը պլանավորելիս հաշվի առեք երեխայի աշխատունակությունն ու կարողությունները: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող որոշ սովորողներ գուցե չկարողանան ներկայանալ և ակտիվ մասնակցել բոլոր առցանց դասերին: Այս հանգամանքը, սակայն, չպետք է կրթությունից դուրս մնալու պատճառ դառնա: Նման դեպքերում անհրաժեշտ է օգտագործել հեռավար ուսուցման այլ ձևեր, օրինակ սովորողին տրամադրել առցանց դասերի ձայնագրությունները, կազմել և էլեկտրոնային փոստով ուղարկել անհրաժեշտ հանձնարարությունները, ինչը հնարավորություն կտա սովորողին յուրացնել նյութը կամ կատարել առաջադրանքներն օրվա այն հատվածում, երբ նա ավելի մասնակցային է: Որոշ դեպքերում կարող է անհրաժեշտություն առաջանալ վերանայելու նախորդ դասերի ժամանակ ուսումնասիրած թեմաները, որոնք կօգնեն սովորողին ամրապնդելու գիտելիքները, և հիմք կստեղծեն նոր գիտելիքների յուրացման համար [1; 20]:

Խթանեք սովորողների մասնակցությունը

Հեռավար ուսուցման ընթացքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի ակտիվ մասնակցությունը խթանելու համար ընդգրկեք նրան խմբային աշխատանքներում և նախագծերում: Նման աշխատանքների իրականացման ժամանակ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին կցեք առավել ակտիվ սովորողների խմբերին, խրախուսեք երեխաներին օգնել միմյանց և սովորել միասին, քանի որ երեխաները գերազանց ուսուցիչներ են միմյանց համար: Ժամանակ առ ժամանակ նրանք կարող են հանդես գալ դասավանդողի դերում՝ ստանալով համապատասխան ցուցումներ [24]:

Հիշեք, որ միայն հեռավար աջակցության տրամադրումը մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող

մասանգետների կողմից դեռևս ամբողջական կրթություն չէ: Կարևոր է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան համադասարանցիների հետ միասին մասնակցի առցանց դասերին, ստանա անհատական ուսուցման պլանից բխող առաջադրանքներ, կատարի և ներկայացնի դրանք [19]:

Խթանեք շփումը

Առաջարկեք խմբային աշխատանքներ այն սովորողներին, որոնց համար նախապես ընտրվել է անհատական աշխատանքի սկզբունքը՝ խթանելով երեխաների հաղորդակցումը և աստիճանաբար անցում կատարելով դասարանային ուսուցմանը: Հաճախակի կազմակերպեք բանավեճեր, քննարկումներ՝ կազմելով առանձին խմբեր: Առցանց հարթակներում կազմակերպեք զրույցներ տարաբնույթ թեմաներով, որտեղ երեխաները կարող են շփվել միմյանց հետ հաղորդակցման պակասը փոխհատուցելու համար: Ձևավորված խմբերին հանձնարարեք դասից հետո գտնել հաղորդակցվելու բոլորին հարմար միջոցը և կատարել խմբային աշխատանքը [20]:

Մշակեք առցանց դասի ընթացքը

Առցանց դասը սկսելուց առաջ նախապատրաստեք անհրաժեշտ բոլոր կայք-էջերը, էլեկտրոնային նյութերը, դիդակտիկ պարագաները և այլն: Այս ամենը հնարավորություն կտա արդյունավետ օգտագործել առցանց դասի համար հատկացված ժամանակահատվածը, ինչպես նաև պահպանել սովորողի ուշադրությունը դասի բուն ընթացքին: Հեռավար անցկացվող դասի արդյունավետության պայմաններից մեկը հաճախակի կատարվող փոփոխություններն են: Կազմեք այնպիսի դասեր, որոնք բաղկացած են տարբեր տեսակի հանձնարարություններից: Օրինակ՝ 5-10 րոպե կարող եք հատկացնել տեսանյութ դիտելու կամ գործնական որևէ այլ աշխատանքի, 10 րոպե՝ բանավոր քննարկումների կամ հարց ու պատասխանի և ևս 10-15 րոպե գրավոր առաջադրանքներ կատարելու համար, մնացած ժամանակահատվածը տրամադրեք տնային առաջադրանքների քննարկմանը: Որքան շատ կարողանաք ժամանակ տրամադրել ինտերակտիվ քննարկումներին և գործնական աշխատանքների կատարմանը, այն-

քան ավելի խթանող և արդյունավետ կլինի դասը: Հնարավորինս տեսանելի դարձրեք Ձեր հույզերը: Օգտագործեք Ձեր ձայնը, մարմինը, աչքերը, որպեսզի երեխան հետաքրքրությամբ և ուշադրությամբ լսի Ձեզ (անհրաժեշտության դեպքում ոգևորվել, ուրախանալ, տխրել, զարմանալ): Օգտագործեք նաև գույներ, արտահայտիչ կամ մեծ տառատեսակներ, հետաքրքիր և գունագեղ նկարներ, տեսանյութեր, որոնք կօգնեն խթանել սովորողի մասնակցությունը, կենտրոնացնել ուշադրությունը, հետաքրքրություն առաջացնել և չձանձրացնել: Ուսուցումը հետաքրքիր ու զվարճալի դարձնելու համար կիրառեք առցանց տարբեր խաղեր:

Տրամադրեք հավելյալ ժամանակ

Հեռավար ուսուցման ձևաչափին հարմարվելու համար բոլոր, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներից, որոշ ժամանակ կարող է պահանջվել: Սովորողների ընտանիքներում թվային սարքերի տեսակները և դրանց տեխնիկական հնարավորությունները տարբեր են, ուստի հանձնարարությունները կատարելու համար սովորողներին պետք է ավելի շատ ժամանակ տալ, քան կարող էր պահանջվել սովորական ուսումնական պայմաններում: Հնարավոր է որոշ ժամանակ նրանք ուղղակի հեռվից լսեն կամ դիտեն ծնողի և ուսուցչի համատեղ աշխատանքը տեսակապի միջոցով կազմակերպված դասի ընթացքում: Նման դեպքերում սովորողի ներկայությունն ու մասնակցությունն ապահովելու համար պետք է սկսել կարճ ժամանակից, այնուհետև աստիճանաբար ավելացնել տևողությունը: Սկզբնական շրջանում կարելի է երեխային թույլ տալ լինել միայն պասիվ լսողի դերում՝ ընթացքում մեծացնելով ակտիվ մասնակցության հնարավորությունները [3]:

Որոշեք հետադարձ կապի և գնահատման միջոցները

Սկզբնական շրջանում ցանկալի է զերծ մնալ միավորային գնահատումից: Մտածեք և կիրառեք գիտելիքների հեռավար ստուգման և գնահատման մեթոդներ: Ուշադրություն դարձրեք ոչ այնքան գնահատմանը, որքան երեխայի կողմից ուսումնական գործընթացի կազմակերպմանը, նրա մասնակցությանը և նոր իրավիճակին հար-

մարվելու կարողությանը: Միավորային գնահատման փոխարեն օգտագործեք բանավոր գնահատումը, որն ավելի խրախուսող և մոտիվացնող միջոց է հետադարձ կապի ապահովման համար: Գովաբանեք սովորողներին գործադրած ջանքերի, այլ ոչ թե արդյունքների համար. խրախուսեք առանձին առաջադրանքներ կամ քայլեր կատարելը, քանի որ նրանց մոտ դեռևս ձևավորված չեն ինքնուրույն գործունեության հմտությունները, որոնք անհրաժեշտ են հեռավար ուսուցման համար [3]:

Ինչպես համագործակցել ծնողների հետ հեռավար ուսուցման պայմաններում

Ներգրավեք ծնողներին ուսուցման գործընթացում

Պետք չէ ծնողներին որևէ բան պարտադրել, պետք է խթանել համագործակցությունը: Ընդգրկեք ընտանիքում առկա բոլոր մարդկային ռեսուրսները՝ ծնողներին, եղբայրներին և քույրերին, ովքեր կարող են աջակցել սովորողին հեռավար դասերի ընթացքում, սակայն մի ծանրաբեռնեք նրանց բազմաթիվ պահանջներով, քանի որ նրանք մանկավարժ չեն և չեն տիրապետում ուսուցման մեթոդներին:

Տեղեկացրեք սովորողի ծնողին երեխայի համար նախատեսված աշխատանքների մասին, ինչը կօգնի լուծել Ձեր առջև դրված խնդիրները: Ինքնուրույն ուսուցումը հեռավար պայմաններում կարող է անհաղթահարելի լինել որոշ երեխաների համար: Նման դեպքերում ուղղորդեք ծնողներին հնարավորինս օգնել և խրախուսել երեխաներին գործադրած ջանքերի համար, անհրաժեշտության դեպքում խնդրեք անմիջականորեն աջակցել ակտիվ վարքագիծ ունեցող երեխաներին, օրինակ՝ նստել կողքին, բռնել ձեռքը, գրկել և վերահսկել վարքը [28]:

Լսեք ծնողներին

Աջակցեք ծնողներին և խրախուսեք նրանց ներգրավվածությունը, լսեք նրանց անհանգստացնող հարցերը և տվեք լիարժեք պատասխաններ: Կարևոր է ուղղորդել սովորողին և ընտանիքին՝ կանխավ տեղեկացնելով պլանավորված աշխատանքների մասին: Լսեք ծնողին և նրա միջոցով տեղեկացեք երեխային ուսուցումը տնային պայմաններում արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ բոլոր հարմարեցումների մասին: Կազմակերպեք անհատական կամ խմբային հանդիպումներ և քննարկումներ սովորողների ծնողների հետ՝ ապահովելով հետադարձ կապը [28]:

Խրախուսեք ծնողին օգտագործել կենցաղն ու առօրյան ուսուցման նպատակով

Երեխայի մոտ հնարավոր է ձևավորել մի շարք հմտություններ՝ կիրառելով կենցաղային առարկաները և ներգրավելով նրան առօրյա տարբեր իրավիճակներում: Խորհուրդ տվեք ծնողներին իրենց երեխաներին ներառել կենցաղային առօրյա աշխատանքներում՝ նպաստելով նրանց կենցաղավարման, ինքնասպասարկման կարողությունների և ինքնուրույնության զարգացմանը: Սովորելով տանը՝ երեխաները հնարավորություն ունեն կիրառելու այն ամենը, ինչը շրջապատում է իրենց. հանձնարարեք կատարել ստեղծագործական առաջադրանքներ, առաջարկեք խաղալ սեղանի խաղեր, մեծահասակի հսկողությամբ կատարել պարզագույն փորձեր և այլն:



ՄԱՍ 2

ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հեռավար ուսուցումը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներից շատերն ինքնուրույն ուսումնառության ընթացքում բախվում են մի շարք մարտահրավերների: Նրանք հաճախ կարիք են ունենում հատուկ հրահանգների և լրացուցիչ աջակցության, ինչպիսիք են՝ առաջադրանքները մասերի բաժանելը, տեսազննական նյութեր օգտագործելը և հաճախակի ուղղորդումներ ստանալը, համոզվելու համար, որ ճիշտ ուղղու վրա են:

Դասարանում ուսուցիչն անմիջապես տալիս է հետադարձ կապ և համապատասխան աջակցություն, սովորողները ստանում են նաև մասնագիտական ծառայություններ, որոնք ձևավորում են նրանց ուշադրությունը կենտրոնացնելու, խնդիրներ լուծելու և հուզական, վարքային ինքնակարգավորման հմտություններ՝ ինչը հնարավոր չէ լիարժեք ապահովել առցանց ուսուցման ժամանակ: Ուսուցման նոր ձևաչափն ընդունելու, կրթական այս նոր միջավայր սահուն անցումն ապահովելու և հարմարվելու համար անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների առանձնահատկությունները [7]:

Ճանաչեք սովորողներին առցանց հարթակում

Բացահայտեք սովորողների կատարողականության, ինքնուրույն աշխատելու, տեղեկատվական տարբեր աղբյուրներից օգտվելու, խմբում համագործակցելու կարողությունները, որպեսզի հնարավոր լինի նախատեսել անհատական և խմբային աշխատանքներ յուրաքանչյուր սովորողի համար:

Հաշվի առեք սովորողների առանձնահատկությունները

Հեռավար ուսուցման ժամանակ հաշվի առեք սովորողների զարգացման առանձնահատկությունները, ինչպես նաև ակտիվության և ինքնատիրապետման մակարդակը.

- Գերակտիվություն և աուտիզմ ունեցող սովորողների համար կարող է դժվար լինել երկար ժամանակ նստել էկրանի առջև, ուստի նրանց

տեղաշարժվելու հնարավորություն պետք է տրվի: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է տալ հարցեր կամ հանձնարարություններ՝ ուշադրության կենտրոնում պահելով և ներառելով նրանց դասապրոցեսին [4]:

- Մտավոր զարգացման խնդիրներ ունեցող սովորողների համար կարող է բարդ և անհետաքրքիր լինել առցանց դասին ամբողջությամբ մասնակցելը: Նախապես ծնողների հետ քննարկեք, թե տվյալ առարկայի համար սովորողի անհատական ուսուցման պլանում ինչ է նախատեսված, վերջինս ինչպես պետք է մասնակցի տվյալ դասին, իր համար նախատեսված ինչ առաջադրանքներ կան: Այս տեղեկատվությունը փոխանցեք ծնողներին և հետևեք դրանց կատարմանը առցանց դասապրոցեսի ընթացքում, առաջարկեք պարզեցված տեքստեր և հանձնարարություններ՝ առանձին մասերի բաժանված: Այս երեխաների համար պլանավորեք պատկերներով, առավել գործնական բնույթ կրող հանձնարարություններ կամ առցանց խաղեր [20]:

- Լսողության խնդիրներ ունեցող սովորողների համար կարող է դժվար ընկալելի լինել առցանց դասի ժամանակ մատուցվող լսողական տեղեկատվությունը, ուստի փորձեք ծնողի հետ նախապես քննարկել և երեխային առաջարկել տպագիր նյութ կամ տեսանյութ, որը կօգնի առավել հասկանալի դարձնել ուսումնասիրվող թեման [25]:

- Տեսողության խնդիրներ ունեցող սովորողների համար դասերի ընթացքում տրամադրվող տեքստային նյութերի ընկալման նպատակով սովորողին կամ ծնողին առաջարկեք համակարգչային տարբեր ծրագրեր, որոնք տեսողական նյութը վերածում են լսողական նյութի: Նմանատիպ ծրագրերի կիրառման անհնարինության դեպքում դասապրոցեսի ընթացքում սովորողի համար պետք է կարդալ տեսողական նյութը կամ սահիկահանդեսում արտացոլված մտքերը: Հանձնարարեք նրանց առավել շատ աուդիո նյութեր [15]:

- Շարժունակության խնդիրներ ունեցող սովորողների ծնողների հետ քննարկեք հնարավորինս հարմար ֆիզիկական պայմաններ ապահովելու հարցը, ձեռքերի շարժումների դժվարություն ունեցող երեխաների համար առաջարկեք կիրառել համապատասխան աջակցող տեխնիկական միջոցներ, իսկ դրանց բացակայության դեպքում ծնողին հուշեք, որ ինքը կարող է երեխայի փոխարեն սեղմել համակարգչի ստեղները՝ գրանցելով նրա մտքերը [11]:

Ստեղծագործաբար մոտեցեք աջակցությանն ու հարմարեցումներին

Իրականացրեք նախագծեր՝ ըստ սովորողների նախասիրության, այսինքն՝ սովորողները ժամանակ առ ժամանակ տանը կկատարեն ոչ թե ուսուցչի կողմից տրված տարաբնույթ վարժություններն ու առաջադրանքները, այլ կիրականացնեն անհատական կամ խմբային նախագծեր՝ ըստ իրենց հետաքրքրությունների և նախասիրությունների: Կարևոր է այս գործընթացներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին կցել մյուս դասընկերներին, ինչը հնարավորություն կտա ոչ միայն համատեղ աշխատանք իրականացնել, այլև սոցիալիզացիայի նախապայման դառնալ: Դասը պլանավորեք՝ օգտվելով ուսուցման համընդհանուր ձևավորման սկզբունքներից, ինչը կապահովի բոլոր երեխաների ակտիվ մասնակցությունը՝ անկախ նրանց կարողություններից [9]:

Պատրաստեք առանձին առաջադրանքների փաթեթներ այս կամ այն ոլորտում դժվարություններ ունեցող սովորողների համար՝ ըստ անհատական ուսուցման պլանի: Խուսափեք երկար տեքստերից, առաջադրանքը բաժանեք մասերի, օգտագործեք սխեմաներ, սահիկահանդեսներ, նկարներ և այլ տեսողական նյութեր, ինչպես նաև ձայնագրություններ, որոնք թույլ են տալիս ավելի դյուրին դարձնել մատուցվող նյութը [20]:

Ուսումնական նյութը տրամադրելիս հաշվի առեք մատչելիությունը բոլոր երեխաների համար:

Խրախուսեք սովորողների մասնակցությունը

Հեռավար կրթությունն ուսուցման նոր ձևաչափ է բոլոր սովորողների համար: Այդ իսկ պատճառով այս ընթացքում նրանք ավելի հաճախ են դժվարություններ ունենում, քան նախկինում: Խրախուսանքն ու պարգևները հնարավորություն կտան Ձեզ առավել հեշտ հաղթահարել այդ դժվարությունները և խթանել երեխային հեռավար ուսուցման պայմաններում: Խրախուսանքը մեծ նշանակություն ունի յուրաքանչյուր երեխայի կյանքում՝ այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող: Երբ խրախուսում ենք սովորողին, նշանակում է դրական ենք գնահատում նրա կատարած փորձերը և ցուցաբերած արդյունքերը: Դրա արդյունքում նա սկսում է ավելի շատ ջանք գործադրել և դառնում է էլ ավելի պատասխանատու [14]:

Երբեմն անհրաժեշտ է փոքրիկ պարգևներ տալ սովորողներին, երբ նրանք հաջողությամբ ինչ-որ առաջադրանք կամ գործողություն են կատարում: Երբ սովորողի համար նախատեսում եք պարգևներ, հաշվի առեք նրա հետաքրքրությունների շրջանակը, անձնային որակները և նախասիրությունները, որպեսզի պարգևները հետաքրքրեն նրանց և ծառայեն որպես խթան: Խոսեք այդ մասին ծնողի հետ և միասին որոշեք, թե ինչ առաջադրանքների կատարման արդյունքում երեխան պետք է ստանա դրանք: Խրախուսանքն ու պարգևները կնպաստեն սովորողների հաղորդակցման, սոցիալ-հուզական հմտությունների զարգացմանը: Ստորև ներկայացված են սովորողին մոտիվացնելու մի քանի արդյունավետ տարբերակներ.

- Օգտագործեք դրական ամրապնդում: Գովեստի խոսքեր ասեք սովորողին յուրաքանչյուր ճիշտ կատարած առաջադրանքի համար կամ երկրորդ հնարավորություն տվեք նրան, երբ նա առաջին անգամ սխալվել է: Սա խթանում է սովորողի ակտիվ մասնակցությունն ուսուցման գործընթացում և նպաստում Ձեզ հետ շփման և հաղորդակցման հմտությունների զարգացմանը:
- Խրախուսեք «սոցիալական պատմությունների» ներկայացման և «սցենարների կազմման» աշխատանքները: Այսպիսի աշխատանքներն օգնում են զարգացնել իրավիճակին համապա-

տասխան վարք և հույզեր դրսևորելու հմտություններն ինչպես խոսքային, այնպես էլ ոչ խոսքային հաղորդակցում ունեցող սովորողների մոտ, վաղ հայտնաբերել սովորողի դժվարությունները, նվազեցնել նրանց սոցիալական մեկուսացումը հետագայում, ինչպես նաև զարգացնել շփման և հաղորդակցման հմտությունները:

- Թույլ տվեք սովորողներին ինքնուրույն ընտրել գործունեության տեսակը: Հեռավար ուսուցումը, որպես ուսուցման նոր ձևաչափ, հաճախ է ուսումնառության գործընթացում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների դժվարությունների պատճառ դառնում: Դա բացասական ազդեցություն է ունենում նրանց ակտիվության և մասնակցության մակարդակի վրա: Այս դժվարությունները հնարավոր է հաղթահարել, եթե Դուք հնարավորություն տաք սովորողին ինքնուրույն ընտրություն կատարել: Բոլոր այն դեպքերում, երբ սովորողն ինքն է ընտրում ուսումնառության ընթացքում իր գործունեության տեսակը, դա բխում է բացառապես իր հետաքրքրություններից և խթանում է նրա մասնակցությունն ուսուցման գործընթացում:

- Առաջարկեք զվարճալի և հետաքրքիր առաջադրանքներ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երեխաներն ավելի արագ են սովորում, ավելի լավ են կենտրոնանում և դրական վարք են դրսևորում, երբ առաջադրանքները զվարճալի և հետաքրքիր են մատուցվում:

Ուշադրություն դարձրեք սովորողի հոգեվիճակին

Ծնողներից տեղեկացեք և հաշվի առեք երեխաների հուզական և տագնապայնության վիճակի մասին, քանի որ այն կարող է սրված լինել՝ պայմանավորված արտակարգ դրությամբ: Անհրաժեշտության դեպքում այդ աշխատանքում ներառեք նաև դպրոցի հոգեբանին, իսկ ծառայության բացակայության դեպքում դիմեք Տարածքային մանկավաժահոգեբանական աջակցության կենտրոնի հոգեբանական ծառայությանը:

Ինչպես օգնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին անցնել հեռավար ուսուցման

Ինչպես օգնել աուտիստիկ սպեկտորի խանգարումներ ունեցող երեխաներին անցնել հեռավար ուսուցման

Հեռավար ուսուցումը զգալի փոփոխություններ է մտցրել աուտիստիկ սպեկտորի խանգարումներ ունեցող սովորողների առօրյայում և առօրյա փոխհարաբերություններում՝ շատերի մոտ առաջացնելով անորոշություն և անհանգստություն: Աուտիստիկ սպեկտորի խանգարում ունեցող սովորողների համար առավել քան դժվար է փոխել իրենց բնականոն կյանքի ընթացքը՝ դպրոցական միջավայրը, առօրյա սովորությունները՝ առանց նախատրամադրվելու: Նրանց համար ընդունելի չէ նաև գործողությունների բնույթի փոփոխությունը՝ այն էլ նման ծավալով: Այս դեպքում առավել կարևորվում է ծնողների մասնակցությունը, քանի որ երեխաները դժվարանում են ինքնուրույն աշխատել, կարող են արագ շեղվել կողմնակի ազդակներից կամ համակարգչային խաղերից, վեր կենալ և դուրս գալ սենյակից առցանց դասապրոցեսի ընթացքում, իսկ ուսուցիչը հնարավորություն չի ունենում կանխել այդպիսի վարքագիծը: Ուստի, ծնողների մասնակցությունն ուսուցման գործընթացում խթանելու համար հարկավոր է խորհրդատվություններ անցկացնել և ուղղորդել ծնողներին՝ ինչպես աշխատել երեխաների հետ և ինչպես ապահովել նրանց ակտիվ մասնակցությունը առցանց դասերի ընթացքում [4; 6]:

Բացատրեք իրավիճակը

Աուտիստիկ սպեկտորի խանգարումներ ունեցող սովորողների համար ընդունելի չեն անբացատրելի փոփոխությունները: Անհրաժեշտ է երեխային բացատրել, թե ինչու է դպրոցն անցել հեռավար ուսուցման և ներկայացնել դրա անհրաժեշտությունը: Իրավիճակը ճիշտ ընկալելու համար այն կարելի է սովորողներին ներկայացնել տեսանյութի կամ սոցիալական պատմությունների միջոցով [13]:

Գործեք իրավիճակին համապատասխան

Որոշ սովորողներ կընդդիմանան հեռավար ուսուցմանը, կկարոտեն իրենց ընկերներին, ուսուցիչներին և նախկին առօրյան: Համակարգչի առաջ դաս սովորելն առաջ է բերում տարբեր սոցիալական խնդիրներ, որոնք կարող են ճնշել երեխային կամ շեղել բուն ուսումնական գործընթացից: Փոփոխեք ավանդական դասապրոցեսի պահանջները, անհրաժեշտության դեպքում՝ նաև անհատական ուսուցման պլանում սահմանված նպատակները: Հաշվի առեք, որ հեռավար ուսուցման պայմաններում աուտիստիկ սպեկտորի խանգարումներ ունեցող սովորողների համար առավել կարևոր է հուզական կայունության և սոցիալիզացիայի ապահովումը [5]:

Պլանավորեք անելիքներն ու ժամանակը

Աուտիստիկ սպեկտորի խանգարումներ ունեցող շատ սովորողներ իրենց ավելի ապահով են զգում, եթե կանխավ տեղեկացվում են անելիքների մասին: Դուք կարող եք նպաստել նրանց հեռավար ուսուցմանը՝ սահմանելով և պահպանելով ժամանակացույց: Կազմեք օրակարգ դպրոցական օրվա մեկնարկի, ընդմիջումների, դպրոցական օրվա ավարտի մասին, նախատեսեք նաև անհատական պարապմունքներ՝ ժամանակացույցը համաձայնեցնելով ծնողների հետ: Դասացուցակն ու անելիքները կանխավ ներկայացրեք սովորողներին՝ դրանք կազմեք որքան հնարավոր է ակնառու և հասկանալի տարբերակներով: Կարևոր է նաև սովորողների հանգստի պլանավորումը: Խորհուրդ տվեք ծնողներին պլանավորել երեխաների ազատ ժամանակը՝ ապահովելով նրանց հանգիստն ու խաղի հնարավորությունը, որպեսզի սովորողների մոտ կարծիք չձևավորվի, որ հեռավար ուսուցման ընթացքում, գտնվելով տանը, նրանք պարտավոր են անդադար սովորել:

Լավ կլինի սովորողի սեղանի մոտ տեղադրել տեսանելի ժամանակացույց: Անհրաժեշտ է կիրառել տարբեր մեթոդներ, որպեսզի սովորողներն ավելի հեշտությամբ անցում կատարեն հեռավար ուսուցման: Օրինակ, առցանց դասի ընթացքում կարող եք ասել, որ հինգ րոպե հետո ընդմիջման ժամանակն է: Դա հնարավորություն կտա սովորողին պատրաստվել գործունեության նոր տեսակին [13]:

Կիրառեք տեսողական և լսողական խթանիչներ



Որքան հագեցած լինի առցանց դասը տեսողական գրաֆիկներով, առաջադրանքների սխեմաներով, աղյուսակներով, դիագրամներով, նախապես պատրաստած ձայնագրություններով, տեսանյութերով, այնքան ավելի շատ հետաքրքրված կլինեն սովորողները դասի ընթացքով: Ուղղորդեք նրանց ուշադրությունը կարևորի և առաջնահերթի վրա: Հաճախակի կիրառեք նկարներ, տեսագրություններ, տեսադասեր, որոնցում նկարագրված է նոր նյութը՝ մատուցված առավել պարզ արտահայտած մտքերով և ուղեկցվող ենթագրերով: Հաշվի առեք այս սովորողների զգայական ընկալման առանձնահատկությունները [18]:

Սահմանեք արդյունավետ մրցակցություն

Խրախուսեք և խթանեք սովորողների մասնակցությունը յուրաքանչյուր կատարված քայլի, նույնիսկ արձագանքի համար: Մրցանակներ սահմանեք կատարված առաջադրանքների համար, օրինակ, եթե սովորողը կարող է նստել միայն 15 րոպե, առաջարկեք նրան մրցանակ՝ յուրաքանչյուր 10 րոպե նստած մնալու դիմաց: Ձևավորեք փոքր խմբեր, հանձնարարեք խմբային առաջադրանքներ, հնարավորություն ընձեռնեք սովորողին ընկերների հետ համատեղ պայքարելու հաղթանակի համար: Որոշեք, թե ինչն է դրդում սովորողին հետաքրքրվել դասընթացով, նաև փորձեք ապահովել շփում և համագործակցում դասընկերների հետ [6]:

Ներգրավեք ամբողջ ընտանիքին

Աուտիստիկ սպեկտորի խանգարումներ ունեցող շատ սովորողներ դժվարանում են ինքնուրույն մասնակցել առցանց դասերին, ուստի փորձեք ներգրավել ծնողներին ձեր աշխատանքներում: Այսպիսի համագործակցված մոտեցումն օգնում է ավելի լավ կառավարել ժամանակը հեռավար ուսուցման ընթացքում և ունենալ իրատեսական սպասելիքներ: Զրուցեք ծնողների հետ, կարևորեք նրանց գիտելիքներն ու փորձը, որոնք նրանք ձեռք են բերել տարիների ընթացքում բազմաթիվ խոչընդոտներ հաղթահարելու արդյունքում: Խթանեք նրանց մասնակցությունը՝ նշելով, որ հեռավար ուսուցումը ևս մեկ մարտահրավեր է, որը նրանք պետք է հաղթահարեն՝ ընտրելով հաջողության հասնելու լավագույն ռազմավարությունները: Խորհուրդ տվեք ծնողներին՝

- ապահովել անաղմուկ միջավայր, որտեղ չեն լինի կողմնակի ուշադրություն գրավող պարագաներ,
- տեսադասերի, առցանց զարգացնող խաղերի միջոցով հետաքրքրություն առաջացնել առցանց դասի նկատմամբ,
- օրինակ հանդիսանալ երեխայի համար՝ սկզբնական շրջանում նա կարող է լինել միայն դիտորդի դերում,
- ունենալ իրատեսական նպատակներ և դրանց համարժեք սպասելիքներ,
- լինել երեխայի կողքին՝ նրան էկրանի առաջ պահելու և ուշադրությունը կենտրոնացնելու համար,
- անհրաժեշտության դեպքում թույլ տալ երեխային շարունակել առցանց դասը՝ գտնվելով շարժման մեջ,
- խրախուսել երեխային՝ գովաբանելով նրան նույնիսկ կրկնվող դրական վարքագծի համար [4; 13]:



Ինչպես օգնել լսողության խանգարումներ ունեցող երեխաներին անցնել հեռավար ուսուցման

Ավանդական ուսուցումից առցանց ուսուցման արագ անցումը, սովորողներից և ուսուցիչներից պահանջեց արագորեն հարմարվել դասավանդման և ուսումնառության նոր ձևին: Առցանց ուսուցումը կարող է խնդրահարույց լինել լսողության կորուստ ունեցող սովորողների համար: Երբ դասը կազմակերպվում է առցանց՝ էլեկտրոնային հարթակների միջոցով, ուսուցչի ձայնը միշտ չէ, որ հստակ է լսվում, իսկ նրա սենյակի անբավարար լուսավորությունը կարող է դժվարացնել տեսողական ազդակներ «կարդալը» լսողության խանգարումներ ունեցող սովորողի համար: Նման խոչընդոտներից խուսափելու համար Ձեզ ենք առաջարկում հետևյալ 11 լավագույն խորհուրդները, որոնք կօգնեն ձեր աշակերտին հաջողության հասնել առցանց դասարանում [25]:

Նվազագույնի հասցրեք ավելորդ աղմուկը

Լսողության խանգարում ունեցող սովորողները դժվարանում են կենտրոնանալ, երբ առկա է ֆոնային աղմուկ: Սահմանեք առցանց դասարանում մասնակցության կանոններ բոլոր սովորողների համար: Եթե միաժամանակ մի քանի սովորող է խոսում, ապա ձայնը սկսում է արձագանքել և յուրաքանչյուրի տան ֆոնային աղմուկը փոխանցվում է բոլորին խոսափողերի միջոցով: Այս ամենը խոչընդոտում է լսողության խանգարում ունեցող սովորողներին հետևել դասին և քննարկումներին, կենտրանանալ և լինել մասնակցային: Առցանց ուսուցման ընթացքում անհրաժեշտ է ապահովել համապատասխան ակուստիկ միջավայրը, ինչն արդյունավետ է բոլոր սովորողների համար: Դրա համար խորհուրդ է տրվում՝

- խոսել հերթով,
- անջատված պահել խոսափողները, երբ դրանք չեն օգտագործվում,
- խոսելիս օգտագործել «ձեռք բարձրացնելու» գործառույթը կամ նմանատիպ այլ միջոցներ,
- օգտագործել զրուցարանի պատուհանը և խմբային սենյակները:

Այս ռազմավարությունների կիրառումը կնվազեցնի ֆոնային աղմուկը, կստեղծի հերթով խոսելու սովորույթ և թույլ կտա լսողության խանգարում ունեցող սովորողներին կենտրոնանալ հիմնական խոսողի վրա, ավելի հեշտությամբ հասկանալ բանավոր հաղորդակցությունը, մասնակցել քննարկումների և ինտերակտիվ գործողությունների [25; 26]:

Ապահովեք «լսելի» խոսք

Ձայնային վատ ազդանշանը և կապերի անջատումները հաճախակի հանդիպող իրավիճակներ են հեռավար դասերի ժամանակ: Կրկնեք և վերաձևակերպեք սովորողների խոսքային հաղորդագրությունները, եթե դրանք պարզ չեն կամ թույլ է ձայնային ազդանշանը, որպեսզի բոլոր երեխաները լսեն և հասկանան, թե ինչ է ասվում:

Խրախուսեք տեսախցիկի օգտագործումը

Լսողության խանգարումներ ունեցող շատ երեխաներ կարողանում են կարդալ շրթունքներից: Նրանք հասկանում են խոսքը՝ դիտարկելով խոսողի շրթունքների շարժումները, դեմքի արտահայտությունները և ժեստերը: Խոսելիս միշտ նայեք դեպի տեսախցիկը, օգտագործեք վառ գույնի շրթներկ, խոսեք դանդաղ և հստակ՝ շեշտադրելով բառերի վերջավորությունները: Խնդրեք բոլոր երեխաներին միացնել իրենց տեսախցիկները: Ուսուցիչների մեծ մասը հիմնականում օգտագործում է տեսախցիկը, իսկ սովորողները ոչ միշտ են միացնում այն: Խրախուսեք երեխաներին միացնել տեսախցիկները, երբ պատասխանում են հարցերին կամ բաժանվում են փոքր խմբերի. խոսողի դեմքը տեսնելը կօգնի հեշտ հաղորդակցվել [26]:

Ուշադրություն դարձրեք լուսավորությանը

Լսողության խանգարումներ ունեցող սովորողների համար ապահովեք շրթունքներից հստակ ընթերցելու հնարավորություն, տեղակայվելով պարզ ֆոն ունեցող լավ լուսավորված սենյակում: Նախքան դասը սկսելը, գտեք Ձեր դեմքի լուսավորությունն օպտիմալացնելու ուղիներ: Խոսելու ընթացքում նայեք տեսախցիկին՝ համոզվելու համար, որ Ձեր դեմքին չկան ստվերներ: Ձեր տեսախցիկը կարգավորելու լավագույն տարբերակն այն է, որ լուսավորությունը լինի Ձեր

առջևում, ոչ թե՝ ետևում: Եթե սենյակի լուսավորությունը (արհեստական կամ բնական) ընկնում է ետևից, ապա Ձեր դիմագծերը դժվար կլինի տարբերակել: Կարող եք օգտագործել օղակաձև լույսեր, շրջանաձև լուսավորող հարմարանք, որը հավասարաչափ լուսավորում է դեմքը՝ նվազեցնելով ստվերները [26]:

Օգտագործեք մատչելի տեխնոլոգիաներ և ծառայություններ

Լսողության խնդիրներ ունեցող երեխաների համար, բանավոր խոսքի հետ համատեղ, արդյունավետ է կիրառել ենթագրեր: Զուգահեռ ընթացող ենթագրերը և լսողական օժանդակ սարքերը հասանելի են դարձնում ուսումնական ծրագիրը լսողության խանգարում ունեցող սովորողների համար: Եթե Ձեր դասերի ժամանակ օգտագործում եք տեսանյութեր, ապա ավելացրեք կամ միացրեք ենթագրերը: Սա կօգնի լսողության խանգարումներ ունեցող սովորողներին ընկալել տեսանյութում ներկայացված ամբողջ ձայնային տեղեկատվությունը: Հիշեք, յուրաքանչյուր սովորող ունի յուրահատուկ կարիքներ, ուստի կարևոր է որոշել, թե որ մոտեցումն է լավագույնը յուրաքանչյուրի համար: Համապատասխան տեխնոլոգիաները և ծառայություններն ընտրելու և կիրառելու հարցում կարող է օգնել սուրդոմանկավարժը:

Ապահովեք տեսանելի նյութեր

Ինչպես «ավանդական», այնպես էլ առցանց դասարանում նկարների, պատկերների և սխեմաների օգտագործումը օգնում է լսողության խանգարում ունեցող սովորողներին հեշտությամբ ընկալել դասի բովանդակությունը: Փորձեք հնարավորինս շատ օգտագործել նկարներ, գրաֆիկական պատկերներ և տեքստային նշումներ: Դասարանին տրվող առաջադրանքները ներկայացրեք գրավոր տեսքով, իսկ բանավոր տեղեկատվությունը հնարավորինս համալրեք նկարներով, գծապատկերներով, սխեմաներով, դիագրամներով: Ուսումնական նյութն ամրապնդելու նպատակով կարող եք կազմակերպել ենթագրերով ուղեկցվող տեսաֆիլմի դիտում:

Կիրառեք այլընտրանքային ռազմավարություններ

Դասի ընթացքում բանավոր ներկայացվող հիմնական տեղեկատվությունը սովորողին տրամադրեք նաև գրավոր՝ նրան «ճիշտ ուղու

վրա» պահելու և հասանելիություն ապահովելու համար: Մի մոռացեք աշակերտների համար գրել բոլոր տնային և ինքնուրույն առաջադրանքները, որպեսզի նրանք հասկանան, թե ինչ, ինչպես և երբ պետք է կատարեն [26]:

Կատարեք ընկալման ստուգումներ

Հաճախակի հաղորդակցվեք լսողության խանգարումներ ունեցող սովորողների հետ՝ համոզվելու համար, որ նրանք հասկանում են դասի յուրաքանչյուր հատվածի հիմնական կետերը: Դրա համար տվեք բաց հարցադրումներ, օրինակ՝ «Կարեն, ասա՛ խնդրեմ, ի՞նչ եք անելու ինքնուրույն աշխատանքի ժամանակ»: Փակ հարցերը, ինչպիսիք են՝ «Հասկացե՞լ եք», ամենայն հավանականությամբ կունենան «այո» պատասխանը՝ անկախ սովորողների ըմբռնումից:

Խրախուսեք կիսվելը

Խրախուսեք լսողության խանգարում ունեցող սովորողներին բարձրաձայնել, եթե նրանք չեն հասկանում, չեն կարողանում լսել ասվածը և ունեն օգնության, պարզաբանումների կամ կրկնակի բացատրությունների կարիք: Հիշեցրեք սովորողին, որ Ձեր ուշադրությունը գրավելու լավագույն միջոցը Ձեզ դիմելն է կամ ձեռք բարձրացնելը: Երբ սովորողները գիտեն, թե ինչպես կարելի է օգնություն ստանալ առցանց դասարանում, ապա ավելի հավանական է, որ նրանք դա կանեն, երբ կունենան դրա կարիքը:

Պատրաստվեք դասին

Հնարավորության դեպքում սովորողին կամ նրա ծնողին տրամադրեք այն բառերի և տերմինների ցանկը, որոնք նա դեռ չի լսել և որոնց հետ նա պետք է ծանոթանա հաջորդ դասի ընթացքում: Սովորաբար լսողական սարքեր կամ կոխլեար իմպլանտներ ունեցող երեխաները, երբ նոր բառ է ներմուծվում, կարող են դադար տալ և մտածել այդ բառի մասին, ինչի արդյունքում բաց են թողնում հաջորդիվ տրվող տեղեկատվությունը: Անծանոթ բառերը սովորողին ավելի վաղ ներկայացնելով՝ Դուք կարող եք իսկապես նվազագույնի հասցնել այդ դժվարությունը՝ սովորողի համար հեշտացնելով նյութի ընկալումն ու

մասնակցությունը դասին: Այլ պարագայում, նոր նյութ բացատրելիս, նոր բառերն ուղեկցեք սովորողին ծանոթ հոմանիշներով կամ պատկերներով [25]:

Սովորողներին ժամանակ տվեք կարճ ներածական զրույցի համար

Յուրաքանչյուր դաս սկսեք մի քանի րոպե տևողությամբ ընդհանուր զրույցով: Այն ժամանակ կտա լսողության խանգարումներ ունեցող սովորողներին համոզվել, որ նրանք պատշաճ կերպով լսում են բոլորին, ինչպես նաև կատարել անհրաժեշտ փոփոխություններն իրենց սարքավորումներում:

Վերոնշյալ ռազմավարությունները հնարավորություն կտան լսողության խանգարումներ ունեցող սովորողներին աշխատել ինքնուրույն և ավելի վստահ զգալ առցանց դասերին մասնակցելիս [26]:

Ինչպես օգնել տեսողության խանգարումներ ունեցող երեխաներին անցնել հեռավար ուսուցման

Անկախ այն հանգամանքից, թե ինչ իրավիճակ է տիրում աշխարհում՝ պայմանավորված ՔՈՎԻԴ-19 համավարակով, յուրաքանչյուր պետություն գործադրում է հնարավոր բոլոր միջոցները երեխաների կրթության իրավունքը հեռավար և/կամ առցանց ուսուցման պայմաններում իրացնելու համար: Ուսուցիչները՝ որպես այս պատասխանատու գործընթացի կարևորագույն մաս, պետք է հաշվի առնեն մի շարք հանգամանքներ երեխաների կրթության շարունակականությունն ապահովելու համար:

Տեսողության խանգարումների առկայության դեպքում որոշ ուսումնական նյութեր և հեռահաղորդակցության սարքեր կարող են հասանելի չլինել սովորողների համար: Սովորաբար նրանց կրթության արդյունավետ կազմակերպման համար ուսուցման գործընթացում կիրառվում են հարմարեցված ուսումնական նյութեր, շոշափողական ընկալման վրա հիմնված մեթոդներ, Բրայլյան համակարգ, տրամադրվում են մանկավարժահոգեբանական ծառայություններ և այլն: Հեռավար ուսուցման պայմաններում այս ամենից օգտվելու հնարավորությունները համեմատաբար սահմանափակ են: Կրթության հասանելիության ապահովման համար կիրառեք ուսուցման այլընտրանքային այնպիսի մեթոդներ և նյութեր, որոնք պետք է բխեն երեխայի առանձնահատկություններից և ստեղծված իրավիճակից: Նախ և առաջ ծանոթացեք բժշկի կողմից տրված տեսողության ֆունկցիոնալության գնահատման արդյունքներին, հստակ գնահատեք սովորողի կարիքները, բացահայտեք կարողություններն ու հմտությունները, ընտանիքի հնարավորություններն ու պատրաստակամությունը և միայն դրանից հետո ընտրեք ուսուցման այն տարբերակը, որն առավել արդյունավետ կլինի տեսողության խանգարում ունեցող սովորողի կրթության հեռավար կազմակերպման համար [15; 28]:

Կրթական ծրագրեր

Տեսողության խանգարում ունեցող երեխաների կրթության արդյունավետ կազմակերպման համար հանրակրթական ուսումնական ծրագրի պարզեցման անհրաժեշտություն կարող է առաջանալ՝ ան-

կախ համավարակի առկայությունից: Եթե սովորողն ունի անհատական ուսուցման պլան, ապա հեռավար ուսուցման կազմակերպման ընթացքում ևս առաջնորդվեք դրանով: Պարզապես ստեղծված իրավիճակում պետք է ավելի զգոն լինեք և ճիշտ թիրախավորեք երեխայի կարիքները: Ոչ բոլոր սովորողներն են կարողանում դպրոցում ձեռք բերված հմտությունները սահուն կերպով տեղափոխել տնային ուսումնական միջավայր, այդ իսկ պատճառով նրանց անհատական ուսուցման պլանում սահմանված նպատակներից որոշները կարող են ավելի առաջնային դառնալ, ինչպես օրինակ՝ ինքնակառավարման, անկախ ապրելու, սեփական անձը և շահերը պաշտպանելու հմտությունները [19; 28]:

Հարմարեցված նյութեր և տեխնոլոգիաներ

Եթե տեսողության խանգարումներ ունեցող սովորողը դժվարանում է կարդալ տպագիր նյութերը, ապա տեսադասերի ստեղծման և տեսակապերի ընթացքում ցուցադրվող նյութերն անհրաժեշտ է կազմել ավելի մեծ տառաչափով: Տեսողության թեթև և միջին աստիճանի խանգարումներ ունեցող սովորողների համար տպագիր նյութեր կազմելիս օգտագործեք 16, իսկ ծանր աստիճանի խանգարումների դեպքում՝ 36 տառաչափը, տառատեսակի Arial տարբերակը: Խուսափեք զարդարված տառատեսակներով գրություններից, վերնագրերը, առաջադրանքների պահանջները կամ այլ կարևոր հատվածներ ավելի տեսանելի դարձնելու համար մգեցրեք տառատեսակը, ապահովեք գունային հակադրություն: Օգտագործեք խոշոր, տեսանելի և գունային հակադրություն ունեցող դիդակտիկ նյութեր: Տեսադասերի ստեղծման և տեսակապերի ընթացքում կիրառվող դիդակտիկ նյութերը ցուցադրեք հաջորդաբար, որպեսզի տեսողության խանգարումներ ունեցող սովորողը կարողանա հնարավորինս հստակ տեսնել և ընկալել դրանք: Այն սովորողները, ովքեր ուսուցման ընթացքում կիրառում են Բրայլյան համակարգ, նույն կերպով պետք է շարունակեն աշխատել նաև տանը: Դա նշանակում է, որ նրանք պետք է ունենան Բրայլյան կաղապար, դրան համապատասխան թղթեր և գրիչ, գրամեքենա և այլն: Եթե դուք չեք տիրապետում Բրայլյան համակարգին, և Ձեզ համար դժվարություն է ներկայացնում ստեղծել կամ վերծանել նյութերը՝ համագործակցեք համապատասխան մասնագետների

հետ: Հնարավորության դեպքում կիրառեք համակարգչային այնպիսի ծրագրեր, որոնք գրված տեքստը փոխարինում են տեսողության խնդիրներ ունեցող սովորողներին հասանելի ձևերի: Այդ տիպի սարքերից են գրանշանների օպտիկական ճանաչման սարքերը և հեռուստացույցները, որոնք կատարում են թղթի էլեկտրոնային խոշորացում, փոխում են տառերի գույնը և երանգը, տեքստը վերածում են խոսքի, իսկ խոսքը՝ տեքստի [28]:

Որոշ ընտանիքների և սովորողների համար հասանելի են նորագույն տեխնոլոգիաները և ինտերնետ կապը, ինչը թույլ է տալիս նրանց օգտվել հեռավար ուսուցման լայն հնարավորություններից: Որոշ սովորողներ կարող են ունենալ մեծ էկրանով աշխատելու հնարավորություն, իսկ որոշներն օգտագործել պլանշետներ կամ սմարթ հեռախոսներ: Կարևոր է, որ Դուք նախապես իմանաք այդ ամենի մասին, քանի որ տեսողության խանգարումներ ունեցող սովորողները փոքր էկրաններով աշխատելիս կարող են լուրջ դժվարություններ ունենալ:

Հատուկ հնարավորություններ

Ուսուցման գործընթացում առցանց ռեսուրսներ ընտրելիս, հաշվի առեք այն, որ դրանք պետք է ունենան տառաչափը մեծացնելու, գունային հակադրություն հաղորդելու, տպելու և այլ հատուկ հնարավորություններ, որպեսզի տեսողության խնդիրներ ունեցող սովորողները կարողանան դրանք հարմարեցնել իրենց՝ ըստ անհրաժեշտության:

Տեղեկատվական տեխնոլոգիաներից, առցանց նյութերից և հարթակներից օգտվելու կարողություններն ու հնարավորությունները սկզբնական շրջանում սահմանափակ են սովորողների և նրանց ընտանիքների համար: Այդ իսկ պատճառով, նախապես պետք է կապ հաստատել ծնողների կամ ընտանիքի մյուս անդամների հետ և նրանց հետ միասին փորձարկել կիրառվող տեխնոլոգիաները և դրանց հատուկ հնարավորությունները: Ուղղորդեք ծնողներին ուսումնասիրել էլեկտրոնային հարթակներից օգտվելու այն ուղեցույցները, որոնք կան համացանցում:

Նորագույն տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաները, հնարավորություն են տալիս օգտվել նաև էլեկտրոնային գրադա-

րաններից: Տեղեկացրեք ծնողներին աուդիոգրքերի և էլեկտրոնային դասագրքերի մասին, ուղղորդեք նրանց բաժանորդագրվել անվճար էլեկտրոնային գրադարաններին: Էլեկտրոնային հավելվածներով գրքեր կարդալը հնարավորություն կտա նրանց մեծացնել տառատեսակը, փոփոխել գույնը, առանձնացնել որոշակի հատվածներ և այլն [15]:

Հեռավար ուսուցումը տեղեկատվական տեխնոլոգիաների և ինտերնետ կապի բացակայության պայմաններում

Որոշ ընտանիքներ կարող են չունենալ տեղեկատվական տեխնոլոգիաներ, հասանելի և կայուն ինտերնետ կապ կամ ուղղակի կարող են պատրաստ չլինել օգտվելու համապատասխան ռեսուրսներից: Նման դեպքերում պետք է գտնել այլընտրանքային տարբերակ ուսուցման գործընթացի շարունակականությունն ապահովելու համար:

Այն սովորողների համար, ովքեր չունեն հասանելի ինտերնետ կապ, նախագծային ուսուցումը գործնականում կարող է լավագույն ստեղծագործական լուծումը լինել: Թույլ տեսնող կամ կույր երեխաների համար գործնական նախագծերը կարող են ներառել հաղորդակցման ռազմավարությունների, տարածական կողմնորոշման և ճկունության, անկախ կյանքի փորձառության ձևավորմանն ուղղված նպատակներ: Որոշ սովորողների համար նախագծի շրջանակում ընտանիքի անդամների հետ համատեղ գործունեությունը կարող է լավ հնարավորություն լինել նրանց հետ փոխհարաբերությունները բարելավելու համար: Ընտանիքն ու սովորողը կարող են տարածության մեջ կողմնորոշվելու և ճկուն գործելու կարողություններն ու հմտությունները զարգացնել առօրյայում որոշակի գործողությունների կատարման միջոցով, ինչպես օրինակ՝ պատրաստել ուտեստներ, հոգ տանել ընտանի կենդանիների մասին, տան պայմաններում պարզ փորձեր անել, կողմնորոշվել տան տարածքում գույքի դասավորության փոփոխությունից հետո և այլն: Ծնողներին նախապես տեղեկացրեք, որ հնարավորության դեպքում կատարված աշխատանքները լուսանկարեն կամ կարճ տեսանյութեր անեն և փոխանցեն Ձեզ:

Որոշ ընտանիքների կարող են հասանելի լինել միայն այնպիսի տեխնոլոգիաներ ինչպիսիք են DVD նվագարկիչները կամ համակարգիչներն առանց ինտերնետ կապի հնարավորության: Նման դեպքերում տեսադասերը և աշխատանքային նյութերը նրանց պետք է փոխանցել DVD ձևաչափով կամ էլեկտրոնային կրիչով [23]:

Ինչպես օգնել շարժունակության խանգարումներ ունեցող երեխաներին անցնել հեռավար ուսուցման

Հեռավար ուսուցումը նոր մարտահրավեր է շարժունակության խանգարումներ ունեցող երեխաների համար: Որպես ուսուցիչ՝ Ձեր առջև խնդիր է դրված պարզել, թե ինչպես պետք է հաղթահարել հերթական մարտահրավերը՝ համագործակցելով երեխայի և նրա ընտանիքի հետ: Կան մի շարք ռազմավարությունները, որոնք կօգնեն ուսուցիչներին ապահովել շարժունակության խանգարումներ ունեցող սովորողների հեռավար ուսուցման մատչելիությունն ու հասանելիությունը:

Տեղեկացեք սոցիալ-կենցաղային պայմանների մասին

Անհրաժեշտ է ճշտել, թե ինչպես են տան պայմաններն ազդում սովորողի հեռավար ուսուցման գործընթացի վրա, քննարկել ծնողի հետ և հարմարեցնել նախատեսված ուսումնական միջավայրը՝ երեխայի կարիքներին համապատասխան: Համոզվեք, որ տանը սովորողին տրամադրած ուսումնական միջավայրը ֆիզիկապես մատչելի է և չի սահմանափակում նրա շարժումները: Ծնողի հետ զրույցի միջոցով պարզեք, թե երեխան ինչ հետաքրքրություններ և նախասիրություններ ունի տանը, ինչ շարժողական հմտություններ կան արդեն ձևավորված և ինչպիսի գործունեության մեջ է սովորողը կարողանում դրանք կիրառել [11]:

Տեղեկացեք անհրաժեշտ անհատական հարմարեցումների մասին

Համապատասխան մասնագետներից տեղեկացեք և ուղղորդեք ծնողներին, թե երեխային ինչ անհատական հարմարեցումներ, աջակցող սարքեր և տեխնոլոգիաներ են անհրաժեշտ հեռավար ուսուցմանն ակտիվ մասնակցելու և առաջադրանքները կատարելու համար, օրինակ՝ հարմարեցված գրենական պիտույքներ, հարմարեցված ստեղնաշար, ֆիքսատորներ, ծանրոցներ, հարմարեցված սեղան, աթոռ, պրոթեզներ, օրթեզներ, սեղմիրան, քայլակ, անվասայլակ, ձեռնափայտ, հենակ և այլն: Օգնեք ծնողներին երեխայի համար ապահովել հարմարավետ ուսումնական տարածք, որպեսզի նա հեռավար ուսուցման ընթացքում կարողանա հեշտությամբ և անվնաս շարժվել, օգտվել անհրաժեշտ պիտույքներից:

Վերազինվեք նոր գիտելիքներով

Համացանցի կամ այլ տեղեկատվական հարթակների միջոցով ծանոթացեք շարժունակության խանգարումներ ունեցող երեխաների զարգացման առանձնահատկություններին և նրանց համար կազմված հատուկ համակարգչային ծրագրերին: Համագործակցեք լոգոպեդի, հոգեբանի, ֆիզիոթերապիստի, էրգոթերապիստի և այլ մասնագետների հետ՝ ստանալով խորհրդատվություն երեխայի կարիքներին համապատասխան ուսումնամեթոդական նյութեր ձեռք բերելու և կիրառելու համար:

Ոգևորեք երեխային

Երեխայի մոտ առկա շարժողական դժվարությունները փոխհատուցեք այլ ոլորտներում նրա ունեցած կարողություններով, հմտություններով և հաջողություններով: Ոգևորեք սովորողներին լինել մասնակցային և ակտիվ, մշակեք կանոններ՝ չսահմանափակելով սովորողների ազատությունը: Խրախուսեք նրանց կատարած յուրաքանչյուր աշխատանք: Ժամանակ գտեք զրուցելու սովորողի հետ և հասկանալու այն դժվարությունները, որոնց նա բախվում է աջակցող սարքերի, ծրագրերի, տեխնոլոգիաների կիրառման ժամանակ. երեխան կարող է ուղղակի չխոսել դրանց մասին [11]:

Հասանելի դարձրեք հեռավար ուսուցումը

Շարժունակության խնդիրները կարող են ազդել սովորողի աշխատելու տեմպի վրա, ուստի ուշադրություն դարձրեք նրա հոգնածության մակարդակին և համոզվեք, որ երեխան բավականաչափ հանգստանում է: Հետևեք սովորողի խոսքի տեմպին՝ չշտապեցնելով կամ չընդհատելով նրան, ընդունեք բանավոր պատասխաններ, եթե երեխան չի կարողանում գրել կամ գրավոր աշխատանքը չի հասցրել ավարտել դանդաղ գրելու պատճառով: Գերլարվածություն չառաջացնելու նպատակով սահմանեք կարճ դադարներ, կատարեք մկանների զարգացմանն ուղղված վարժություններ՝ կիրառելով համապատասխան տեսադասեր: Ուսուցումն ավելի հասանելի դարձնելու համար օգտագործեք տեղեկատվական բազմազան տեխնոլոգիաներ [4]:



Ինչպես օգնել մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաներին անցնել հեռավար ուսուցման

Մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաների առցանց ուսուցման կազմակերպումը հիմնվում է ուսուցիչ-ծնող սերտ համագործակցության վրա, քանի որ այս երեխաները հիմնականում չեն կարողանում ինքնուրույն գործել առցանց դասերի ընթացքում: Այս երեխաները հաճախ ունենում են զարգացման բազմակի խանգարումներ: Պետք է նշել, որ հեռավար դասերի կազմակերպումն արդյունավետ է հատկապես նրանով, որ դրանք կարելի է իրականացնել նույնիսկ այն ժամանակ, երբ երեխան առողջական խնդիրների պատճառով ստիպված է երկար ժամանակով չհաճախել դպրոց: Ուսուցման հեռավար ձևաչափն ապահովում է երեխաների կրթության շարունակականությունը նույնիսկ այն դեպքում, երբ նրանք գտնվում են երկարատև բուժման մեջ, հիվանդանոցում կամ տանը [11]:

Ապահովեք համապատասխան տեխնոլոգիաների կիրառումը

Երեխայի հետ աշխատող մանկավարժահոգեբանական աջակցության խմբի և ծնողի հետ միասին որոշեք և անհատական ուսուցման պլանում ամրագրեք այն բոլոր հարմարեցումները, որոնք անհրաժեշտ են երեխայի կրթությունը հեռավար կազմակերպելու համար, օրինակ՝ հատուկ հարմարեցված ստեղնաշար, անլար մկնիկ, զգայական էկրան: Մանկավարժահոգեբանական խմբի և ծնողի հետ միասին որոշեք, թե ինչ տեխնիկական միջոցներ, ինչ հարմարեցումներ են նաև անհրաժեշտ, որպեսզի դրանց միջոցով երեխան կարողանա հիշել առաջադրանքների կատարման կամ դասերի մեկնարկի, ավարտի մասին, օրինակ՝ ավազե ժամացույց, զարթուցիչ, վայրկյանաչափ և այլն: Այս ամենի միջոցով երեխան կստանա ձայնային, տեսողական, շոշափողական նախազգգուշացումներ իր օրվա գրաֆիկի մասին [11]:

Ապահովեք սոցիալական շփում

Հաճախակի կազմակերպեք առցանց հանդիպումներ՝ միացնելով Ձեր տեսախցիկը և խնդրելով, որ նույնն անեն նաև բոլոր երեխաները: Կարևոր է, որ նրանք հանդիպմանը ներկայանան իրենց անուննե-

րով և նկարներով: Խնդրեք երեխային անվանել այն մասնակցի անունը, ում նկարը ցույց կտաք: Միացրեք երեխաների ձայներն առանձին, առանց նկարը ցուցադրելու և խնդրեք երեխային գուշակել, թե ում ձայնն է: Այս ամենն օգնում է զարգացման բազմակի խնդիրներ ունեցող երեխային ամրապնդելու սոցիալական շփումը: Նպատակահարմար է, որ այսպիսի առցանց հանդիպումները ներառվեն երեխայի ամենօրյա գրաֆիկում [10]:

Ցուցադրեք տեսադասեր, վեբինարների ձայնագրություններ

Ձայնագրությունները պետք է ունենան առօրյա կյանքի հմտություններն ուսուցանող բաղադրիչներ: Տեսադասերն ու վեբինարները պետք է պարունակեն առօրյա այնպիսի խնդիրների լուծումներ, որոնք կատարվում են 3-4 փուլով: Սկզբում երեխային ցուցադրեք ամբողջ գործողությունը, հետո բոլոր փուլերը, բացի 4-րդից: Երեխան ինքնուրույն պետք է նշի 4-րդ փուլում կատարվող գործողությունը, այնուհետև ցուցադրվում են 1-ին և 2-րդ փուլերը, իսկ երեխան նշում է 3-րդն ու 4-րդը: Պատրաստեք փուլերին համապատասխան նկարներ և երեխային առաջարկեք դասավորել հերթականությամբ՝ ըստ փուլերի: Ծնողին հանձնարարեք, որպեսզի երեխան տվյալ գործողությունը փուլ առ փուլ կատարի նաև իրական առարկաներով:

Դասը մատուցեք թվայնացված ձևով

Դասը, պատմությունը, սյուժեն ներկայացրեք թվայնացված նկարներով, առանձին բառերով, նշաններով, սիմվոլներով, որոնք առավել ընկալելի են երեխայի կողմից: Թույլ տվեք երեխային դասը պատմել այդ թվայնացված նյութերով: Ստեղծեք անիմացիոն տեսադասեր, որտեղ ընդգրկված կլինեն դասարանի բոլոր սովորողներն իրենց կարողություններին համապատասխան: Անիմացոն դասերի ձայնագրությունների միջոցով զարգացման բազմակի խնդիրներ ունեցող երեխաներն ավելի հեշտ են յուրացնում նոր նյութը: Դասը վարեք ինտերակտիվ ձևաչափով՝ ապահովելով կենդանի շփում:

Ինչպես օգնել ուշադրության պակաս և գերակտիվության համախտանիշ ունեցող երեխաներին անցնել հեռավար ուսուցման

Ուշադրության պակաս և գերակտիվության համախտանիշ (ՈՒՊԳՀ) ունեցող երեխաների ծնողները նշում են, որ երեխաների համար հեռավար կրթությունը հաճախ ուղեկցվում է լացով, կամակորությամբ, իսկ որոշ դեպքերում՝ նաև հիստերիայով: Այսպիսի դժվարությունները չեն հաղթահարվի առանց ուսուցչի աջակցության:

Առկա ուսուցման ժամանակ ուսուցիչը սովորաբար միաժամանակ տեսնում է ամբողջ դասարանի սովորողներին, կարողանում է հետևել նրանցից յուրաքանչյուրին, իսկ հեռավար ուսուցման ժամանակ այդ ամենն ապահովել այնքան էլ հեշտ չէ, հատկապես այն դասարանների հետ աշխատելիս, որտեղ կա ՈՒՊԳՀ ունեցող երեխա: Հայտնի է, որ տան պայմաններում հեռավար ձևաչափով սովորելը երեխայից պահանջում է ավելի շատ կենտրոնացվածություն և կազմակերպվածություն, քան առկա ուսուցումը: Ինչպես գիտենք, թե՛ կենտրոնացվածությունը և թե՛ կազմակերպվածությունն այնպիսի որակներ են, որոնք հաճախ բացակայում են ՈՒՊԳՀ ունեցող երեխաների մոտ: Այս երեխաները մեծ ջանքեր են գործադրում հեռավար ձևաչափով սովորելու համար, որի արդյունքում նրանք դառնում եմ նյարդային և տագնապային [16]:

ՈՒՊԳՀ ունեցող երեխաների առցանց ուսուցման գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ստորև ներկայացված աջակցության 5 հիմնական ձևերին:

Պարզեք ՈՒՊԳՀ ունեցող երեխայի համար առավել հարմար սովորելու ձևերը

Առցանց դասերը կազմակերպեք ֆիզիկական և մտավոր դադարներով, դասը բաժանեք ավելի փոքր հատվածների, դասի ընթացքում, համեմատած դասարանի մյուս սովորողների, ՈՒՊԳՀ ունեցող սովորողին ավելի շատ դիմեք՝ հետադարձ կապն ապահովելու նպատակով, սովորողի հետ հաստատեք ընկերական հարաբերություններ, որպեսզի հասկանաք, թե ինչով կարող եք օգնել նրան, պարզեք, թե

նա ինչպես է ավելի հեշտ սովորում և հարմարվեք նրան: Դասի ժամանակ միացրեք հանգիստ մեղեդայնությամբ երաժշտություն, քանի որ երաժշտության ներքո ՈՒՊԳՀ ունեցող երեխաներն ավելի լավ են կենտրոնանում: Թույլ տվեք երեխային դասին միանալ հեռախոսով, ադպես երեխան կարող է ազատ տեղաշարժվել տանը, բակում՝ միևնույն ժամանակ ոչ մի րոպե չկտրվելով դասից՝ ինչն օրինակ երեխան չի կարող անել համակարգչի առջև նստած: Այս դեպքում հեռախոսը նրան անհրաժեշտ է հարմարավետության համար, իսկ մարմնի «զբաղվածությունը» կնպաստի կենտրոնացվածության բարձրացմանը: Թույլ տվեք երեխային Ձեր կողմից նոր նյութը հաղորդելու ընթացքում զուգահեռ զբաղվել օրինակ ուլունքագործությամբ, ծեփագործությամբ և այլն: Երբ երեխայի ձեռքերը զբաղված են, նա ավելի լավ է կենտրոնանում Ձեր ասածի, հաղորդած նյութի ընկալման վրա [16; 21]:

ՈՒՊԳՀ ունեցող երեխայի համար սահմանեք կոնկրետ օրակարգ և ժամանակացույց

Երեխայի հեռախոսի մեջ ներբեռնեք հիշեցումների ժամանակացույց, որը նրան կհիշեցնի դասի մեկնարկի, ավարտի, ինչպես նաև յուրաքանչյուր առաջադրանքի կատարման համար իրեն տրված ժամանակի մասին: Այսպես նա կկարողանա ուշադրությունը կենտրոնացած պահել սահմանված ժամանակահատվածում: Հանգստի, դադարների մեկնարկի և ավարտի մասին հիշեցրեք ժամանակացույցի միջոցով: Կարելի է այդ նպատակով կիրառել տարբեր ժամացույցներ, որոնք առավել հարմար են երեխայի համար:

ՈՒՊԳՀ ունեցող երեխային ծանոթացրեք մեծ գաղափարներին

Սկզբում երեխային ուսուցանեք մեծ գաղափարներ, հետո՝ ավելի փոքրերը, օրինակ՝ սկզբում բացատրեք, թե ինչ է անտառը, հետո խոսեք ծառերից, քանի որ այս երեխաներն ավելորդ մանրամասնություններից նյարդայնանում են: Երեխայի մոտ ձևավորեք իմաստային քարտեզ ասվածը, որը որոշում է երեխայի վարքը և

օգնում է նրան հասնել իր նպատակին՝ հիշելով դրան հասնելու քայլերի հաջորդականությունը: Օրինակ, մի քանի գործողությունից կազմված առաջադրանքի կատարումն ՈՒՊԳՀ ունեցող երեխային առաջին հայացքից բարդ է թվում, բայց իմաստային կապեր ստեղծելով այդ գործողությունների միջև՝ նա կարողանում է կատարել այն [16]:

Կիրառեք այն ռազմավարությունները, որոնք ՈՒՊԳՀ ունեցող երեխաներն արդեն կիրառում են

ՈՒՊԳՀ ունեցող երեխաների մեծ մասը տեքստը կարդում է արագ, առանց դրա իմաստը հասկանալու, օգտագործեք այդ փաստը՝ դասապրոցեսի ընթացքում կիրառելով արագ ընթերցանության տեխնիկան: Երեխային խնդրեք կարդալ դասը՝ առաջարկելով յուրաքանչյուր պարբերության համար նշել հիմնական գաղափարը հեշթեգերով: Այսպես նա հասկանում է տեքստի բովանդակությունը՝ պահպանելով պատճառահետևանքնային կապերը, ինչպես նաև հիշում է իրադարձությունների հաջորդականությունը [21]:

Ստեղծեք դադար ուղեղի և մարմնի միջև

Յուրաքանչյուր առաջադրանքից հետո թույլ տվեք, որ ՈՒՊԳՀ ունեցող երեխան շարժվի, հյութ կամ ջուր խմի: Այդպիսի ընդմիջումներն ՈՒՊԳՀ ունեցող երեխային օգնում են էներգիա հավաքել և հաջորդ առաջադրանքի կատարման վրա ավելի երկար կենտրոնանալ: Դասի սկզբում և վերջում սովորողների հետ կատարեք շնչառական վարժություններ, որոնք ՈՒՊԳՀ ունեցող երեխաներին օգնում են հանգստանալ և պատրաստվել դասին: Կազմակերպեք առցանց դասեր, որոնց ժամանակ երեխաները միայն զրուցում են միմյանց հետ, զվարճանում: Այսպես ապահովվում է սոցիալական շփումը նրանց միջև, ինչպես նաև օգնում է ՈՒՊԳՀ ունեցող երեխային լիցքաթափվել և ակտիվ մասնակցել հաջորդ դասին [21]:

Ինչպես օգնել խոսքի և հաղորդակցման խանգարումներ ունեցող սովորողներին անցնել հեռավար ուսուցման

Խոսքի և հաղորդակցման խանգարումներ ունեցող սովորողները կարող են բախվել դժվարությունների, երբ ուսուցումը կազմակերպվում է հեռավար ձևաչափով: Օրինակ, երեխան կարող է չընկալել տեսադասի բովանդակությունը կամ բաց թողնել առցանց դասի ընթացքում ասված արտահայտությունները, որոնք սովորաբար ընկալել է առկա դասերի ժամանակ:

Խոսքի և հաղորդակցման խնդիրներ ունեցող սովորողների հեռավար կրթությունն առավել արդյունավետ կազմակերպելու համար ներկայացնում ենք խորհուրդներ, որոնք կօգնեն Ձեզ հաղթահարելու այն դժվարությունները, որոնք առաջացել են առցանց ուսուցման ընթացքում [22]:

Դասի ընթացքում կիրառեք ենթագրեր, ոչ խոսքային միջոցներ

Խոսքի իմաստային ընկալման խանգարումներ ունեցող երեխաները հաճախ բաց են թողնում կամ չեն ընկալում ուսուցչի խոսքը: Այդ նպատակով նոր նյութը բանավոր բացատրելիս կիրառեք ենթագրեր, որոնք կօգնեն սովորողին ոչ միայն լսել, այլ նաև կարդալ համապատասխան տեղեկատվությունը: Խոսեք դանդաղ, պարզ, հստակ, հասկանալի և ընդգծված արտասանությամբ: Հրահանգներն ուղեկցեք ժեստով և դիմախաղով [8]:

Ապահովեք սովորողի հանգիստը և սոցիալական շփումը

Հաղորդակցման խնդիրներ ունեցող սովորողները հաճախ կարիք են ունենում հասակակիցների հետ շփվելու, որի արդյունքում զարգանում են սոցիալական հմտությունները՝ ինչը դժվար է համավարակի ժամանակ: Այդ նպատակով կարող եք տեսադասերի ընթացքում ստեղծել հանգստի սենյակներ, որպեսզի երեխաները կարողանան շփվել և հաղորդակցվել: Հանգստի սենյակում կիրառեք ռիթմիկ վարժություններ, երգեր՝ շարժումների ուղեկցմամբ, որոնք օգնում են հատկապես կակազություն ունեցող սովորողներին ազատվել ավելորդ լարվածությունից [3]:

Օգնենք սովորողին հասկացված լինել

Կակազություն կամ հնչարտաբերման խնդիրներ ունեցող սովորողին առաջարկեք հարցերին պատասխանել գրուցարանում գրելով, հատկապես այն դեպքում, երբ երեխային չեն հասկանում հասակակիցները: Սովորողին առաջատար դեր տվեք երկխոսության մեջ և ժամանակ հատկացրեք, որպեսզի նա կարողանա արձագանքել Ձեր հրահանգներին:

Խրախուսեք տեսանյութերի, ֆիլմերի ստեղծումը

Առաջարկեք սովորողին համապատասխան թեմայի շուրջ տեսանյութեր, ֆիլմեր ստեղծել և այդպես ներկայացնել դասը: Հաղորդակցման և խոսքի խանգարումներ ունեցող սովորողներն այս եղանակով կենտրոնանում են դասի, թեմայի շուրջ և ոչ՝ իրենց խոսքի վրա: Այսպես նրանք ավելի անկաշկանդ են լինում, քանի որ չեն խոսում կամ չեն ներկայացնում դասն ամբողջ դասարանի ներկայությամբ [7]:

●●●

Ամփոփելով կրթության առաձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ անցկացվող հեռավար դասերի արդյունավետության բարձրացման համար ներկայացված մեթոդական ցուցումներն ու առաջարկությունները, կարող ենք նշել, որ մանկավարժը որքան լավ է ճանաչում իր դասարանի սովորողներին, այնքան հեշտությամբ կարող է նախապատրաստվել դասին: Ինչ վերաբերում է հատուկ մոտեցումների կիրառմանը, ապա ժամանակակից մանկավարժությունը փաստում է, որ որքան դասը հարմարեցված է լինում կոնկրետ երեխայի կարիքներին, այնքան այն մատչելի է դառնում մյուսների համար: Օրինակ, լսողության կամ խոսքի խանգարումներ ունեցող երեխաների համար կիրառվող ենթագրերը նյութն առավել հասկանալի և մտապահվող կարող են դարձնել մյուս սովորողների համար, իսկ ենթագրերի տառաչափի մեծացումը կամ դրանց ձայնային ուղեկցումն արդեն նյութը մատչելի կդարձնի նաև տեսողության խանգարումներ ունեցող երեխաների համար: Ուստի շատ կարևոր է, որ մանկավարժը դասը պլանավորելիս հաշվի առնի, թե ինչպես յուրաքանչյուր հարմարեցում կիրառի ի օգուտ բոլոր սովորողների և իր դասը կառուցի՝ հիմնվելով Ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքների վրա:

ՄԱՍ 3

ԻՆՉՊԵՍ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ԴՊՐՈՑ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Սանիտարահիգիենիկ պայմանների պահպանումը որպես անվտանգ աշխատանքի գրավական

Ժամանակակից աշխարհում ցանկացած ճգնաժամ իր ազդեցությունն է ունենում նաև ուսումնառության գործընթացի վրա՝ նոր մարտահրավերներ ստեղծելով կրթական համակարգի համար: Կորոնավիրուսային հիվանդության և արտակարգ դրության պայմաններում դպրոցը պետք է շարունակի յուրաքանչյուր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության իրավունքի իրացումը՝ բարելավելով կրթության կազմակերպումը համավարակների ընթացքում:

Ուսումնական հաստատությունները պետք է պահպանեն Պարետատան կողմից հաստատված «Կորոնավիրուսային հիվանդության (ՔՈՎԻԴ-19) պայմաններում հանրակրթական ուսումնական հաստատություններում գործունեության կազմակերպման ուղեցույցի» ցուցումները:

Հեռավար կրթությունից հետո երեխան պետք է վերադառնա դպրոց և լավագույն տարբերակը նրան դասերից չկտրելն է, եթե չկան հատուկ ցուցումներ՝ ըստ վերոնշյալ ուղեցույցում առկա հիվանդությունների, վիճակների ցանկի: Համավարակի ընթացքում ուսումնառության գործընթացում երեխայի անընդհատ և շարունակական մասնակցությունն ապահովելու համար անհրաժեշտ է պահպանել մի շարք կանոններ և հետևել որոշ սկզբունքների:

Անվտանգության կանոններ և անձնական հիգիենա

Համավարակի ընթացքում՝ գտնվելով տանը, երեխաներն անընդհատ լսում և տեսնում են վարակից պաշտպանվելու անվտանգության կանոններին և անձնական հիգիենային հետևելու անհրաժեշտության մասին տեսանյութեր: Հարկ է նշել, որ դպրոց վերադառնալուն պես, երեխաներն ունենում են միջավայրում հարմարվելու որոշակի դժվարություններ՝ պայմանավորված ՔՈՎԻԴ-19 համավարակով: Այս դեպքում դպրոցը երեխայի համար դառնում է նոր միջավայր, քանի որ բոլորի համար գործում են նոր կանոններ և պահանջներ:

- Դուք՝ որպես ուսուցիչ և ուսումնական հաստատության աշխատակից, ով պատասխանատու է հաստատված կանոնների պահպանման համար, ուսումնական հաստատությունում համավարակի տարածումը կանխելու նպատակով դպրոց հաճախող երեխայից պետք է տեղեկանաք, արդյո՞ք նա ջերմաչափվել է տանը և ինչպիսի՞ն է նրա առողջական վիճակը: Երեխայի ինքնազգացողության վատթարացման դեպքում անմիջապես ջերմաչափեք նրան, ջերմություն ունենալու դեպքում առանձնացրեք համապատասխան սենյակում, դիմեք դպրոցի բուժաշխատողին և հնարավորինս արագ կազմակերպեք երեխայի տուն գնալը: Երեխային բացատրեք սոցիալական հեռավորության գաղափարը, համավարակի պայմաններում դրա պահպանման անհրաժեշտությունը և Ձեր իսկ օրինակով երեխային սովորոցրեք հետևել սահմանված կանոններին դպրոցական միջավայրում: Երեխայի հետ խոսեք հիգիենայի կաննոների պահպանման կարևորության մասին, հիշեցրեք նրան, որպեսզի հաճախ լվացվի կամ ախտահանի ձեռքերը հատուկ ախտահանիչ միջոցներով, երբ դպրոցում օգտվում է ընդհանուր օգտագործման համար նախատեսված առարկաներից և սարքերից: Ծնողներից և երեխաներից պահանջեք պահպանել համավարակի պայմաններում դպրոցում սնունդ ընդունելու անհրաժեշտ կանոնները: Երեխային բացատրեք դպրոցում մշտապես դիմակ կրելու անհրաժեշտությունը: Հետևեք, որ սահմանված ժամանակահատվածում սովորողը փոխի դիմակը՝ նախապես ախտահանելով ձեռքերը, իսկ փոխած դիմակը զգուշորեն նետի դրա համար հատկացված փակվող, կափարիչի ոտնակային կամ սենսորային կառավարմամբ աղբամանների մեջ: Ուշադիր եղեք, որ երեխան դասամիջոցներին ևս լինի դիմակով, թույլ մի տվեք երեխաների կուտակումները դասամիջոցներին: Յուրաքանչյուր դասից առաջ և հետո ախտահանեք դասասենյակը, բացեք պատուհանները և հաճախակի օդափոխեք այն:

Հաղորդակցման հասանելիություն

Ուսումնական հաստատությունում սովորողների, անձնակազմի և այցելուների շրջանում դիմակների կրումը պարտադիր է՝ համաձայն

Առողջապահության նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 23-Ն հրամանի, փոխելով դրանք 3-4 ժամը մեկ անգամ և՝ ըստ անհրաժեշտության, բացառությամբ լսողության և խոսքի տարբեր աստիճանի խանգարումներ ունեցող սովորողների և ուսուցման ընթացքում նրանց հետ աշխատող ուսուցիչների, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների: Կտորե, պլաստիկե դիմակները կարող են սահմանափակել կամ խոչընդոտել հաղորդակցության մատչելիությունն այն սովորողների համար, ովքեր շփվում են խոսքի միջոցով: Դրանք խոչընդոտում են դիմային ժեստիկուլյացիայի ընկալմանը, ինչը խոսքի հասկացման և արտասանման կարևորագույն մասն է: Դիմակների կրումն ու սոցիալական հեռավորության պահպանումը կարող են աղավաղել կամ նվազեցնել խոսքի ծավալն ու ուժգնությունը: Արդյունքում՝ խաթարվում է հասակակիցների հետ շփման մատչելիությունը: Ականջներին կամ գլխին ամրացված ժապավենների պատճառով դիմակների կրումը մեծ դժվարություններ է առաջացնում այն սովորողների համար, ովքեր օգտագործում են ականջին ամրացվող լսողական սարքեր, կոխլեար իմպլանտներ, ակնոց և այլն: Դիմակների կրումն անհարմար է նաև թքածորություն ունեցող սովորողների համար: Որոշ սովորողներ հնարավոր է չկարողանան հանդուրժել դիմակ կրելը, մյուսները՝ կարող են չհասկանալ դիմակ կրելու անհրաժեշտությունը կամ կարող են ուղղակի շեղվել՝ դիմակ կրելով:

Սոցիալական հեռավորության կրթական հետևանքները

Ինչպես արդեն նշվեց՝ կան սովորողներ, ովքեր չեն կարողանում ճիշտ ընկալել սոցիալական հեռավորություն հասկացությունը, սակայն որոշ դեպքերում էլ՝ ուղղակի չեն կարող հետևել սահմանված կանոններին: Օրինակ լսողության կամ տեսողության խանգարումներ ունեցող սովորողները պետք է մոտ տարածության վրա գտնվեն ուսուցիչներից և հասակակիցներից, որպեսզի խոսքը հասանելի և լսելի լինի նրանց: Որոշ սովորողներ ֆիզիկական շփման կամ աջակցության կարիք ունեն, ինչպես նաև՝ նրանց համար կարևոր է անձնական խնամքը՝ անձնական կարիքների հոգում, կերակրում և այլն, որն իրականացվում է այլ անձանց անմիջական աջակցությամբ:

Ինքնախնամքը որպես աշխատանքը ներդաշնակ դարձնելու միջոց

Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված՝ դպրոցները փակվեցին և ինչպես երեխաները, այնպես էլ ուսուցիչները երկար ժամանակով հայտնվեցին տանը, մեկուսացված պայմաններում: Այս իրավիճակն, իհարկե, իր ազդեցությունն ունեցավ նրանցից յուրաքանչյուրի հոգեվիճակի վրա: Դուք՝ որպես ուսուցիչ, անպայման պետք է զրուցեք երեխայի հետ, բացահայտեք նրան անհանգստացնող հարցերը, խնդիրները, քննարկեք, պատասխանեք հարցերին և երեխայի հետ միասին գտնեք համապատասխան լուծումները՝ չանտեսելով Ձեր իսկ հոգեբանական ինքնապահպանությունը:

Երեխայի հոգեվիճակը հեռավար կրթությունից հետո

Ինքնամեկուսացումից հետո, երբ երեխան վերադառնում է դպրոց, նրա համար դժվար է հարմարվել դպրոցական առօրյային, գրաֆիկին: Դժվարությունները հաղթահարելու համար պետք է զինվեք համբերությամբ և հասկանաք, որ այդ ամենը ժամանակավոր է: Դասապրոցեսի ընթացքում երեխային չմոտենալը, նրանից սոցիալական հեռավորություն պահպանելը, դժվար է թե՛ երեխայի և թե՛ Ձեզ համար: Այս նպատակով զրուցեք երեխայի հետ՝ ևս մեկ անգամ նրան հիշեցնելով անվտանգության կանոնները և բացատրեք, որ նման կերպ շփվելու արդյունքում դուք երկուսդ էլ չեք վտանգում նաև ձեր սիրելի մարդկանց առողջությունը: Ստեղծված պայմաններում ուսումնական հաստատությունները ստիպված են կազմակերպել և իրականացնել երեխաների ուսուցումը հեռավար կամ առկա տարբերակով՝ աշակերտների կրթության անընդհատությունն ապահովելու համար:

Ուսուցչի հոգեվիճակը հեռավար կրթությունից հետո

Որպես ուսուցիչներ, կանոնավոր կրթական գործընթաց ապահովելով, Դուք օգնում եք սովորողներին հաղթահարելու կյանքի դժվարին իրավիճակները: Սակայն, նման դեպքերում աշխատանքը կարող է ուժասպառ անել Ձեզ հոգեպես և ֆիզիկապես: Իսկ այն դեպքերում, երբ դժվարին իրավիճակները վերաբերում են ամբողջ կրթական գործընթացին, շարունակական բնույթ են կրում և անդրադառնում են ինչպես աշակերտների, այնպես էլ ուսուցիչների վրա՝ հոգեբանական կայունության պահպանումն էլ ավելի դժվար է դառնում: Այդուհանդերձ, սովորողներին արդյունավետ աջակցելու համար անհրաժեշտ է հետևել հոգեբանական ինքնապահպանության հիմնական կանոնին, այն է՝ «Հոգ տարեք Ձեր մասին»: Համաձայն այդ կանոնի.

- ժամանակ հատկացրեք Ձեզ և Ձեր ընտանիքին. անպայման հնարավորություն և ուժ գտեք, ընտանիքի, հարազատների և ընկերների հետ ժամանակ անցկացնելու համար, նույնիսկ այն դեպքում, երբ դուք չափազանց պարտավորված եք Ձեզ զգում սովորողների առջև:
- Հետևեք Ձեր ֆիզիկական առողջությանը. լավ սնվեք, բավարար չափով հանգստացեք, քնեք, անհրաժեշտության դեպքում դիմեք բժշկի: Երբեմն դժվար է դասավանդել, այն դեպքում, երբ վատառողջ եք:
- Սովորություն դարձրեք պարբերաբար կազմակերպել կամ մասնակցել այլ ուսուցիչների խմբի հետ հանդիպումների՝ շփվեք, աջակցեք միմյանց, քննարկեք աշխատանքային հարցեր: Մի անտեսեք այլ ուսուցիչների աջակցությունը և մի հրաժարվեք նրանց օգնությունից, ինչպես նաև առաջարկեք Ձեր օգնությունը: Այդպես դուք կարող եք փոխարինել մեկդ մյուսին անհրաժեշտության դեպքում [17]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բեզիրջյան Խ., Խաչատրյան Վ., Հովհաննիսյան Գ., Բաբայան Ս.- Եր. 2017թ.: ՀՀ պետական կառավարման ակադեմիա, Հեռավար ուսուցման կազմակերպումը և իրականացումը կանոնակարգող փաստաթղթերի ժողովածու Հ 530 - 152 էջ:

2. Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) պայմաններում հանրակրթական ուսումնական հաստատություններում գործունեության կազմակերպման ուղեցույց http://escs.am/files/files/2020-08-25/709e774b3ebe0c3afc18767bf6289c99.pdf

3. Սվաջյան Ա.Հ., Ադամյան Հ.Ա. և այլոք: Ինչպես խթանել ներառումը դասարանում: Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ. - Եր.: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2020 - 235 էջ

4. Гусева Н.Ю. Пискарева О.С. Применение дистанционных технологий в обучении детей с расстройствами аутистического спектра Аутизм и нарушения развития 2020. Т. 18. № 2. С. 6—13

5. Кобрина Л. М., Данилкина М. Ю. 2015. Дистанционное обучение как один из подходов в социализации детей с аутизмом. Журнал, Вестник Ленинградского государственного университета им. А.С. Пушкина

6. Лич Д. Прикладной анализ поведения: Методики инклюзии обучающихся с РАС. Москва: Оперант, 2015. 176 с. ISBN 978-5-9906841-1-9

7. Невзоров Б. П., Алдохина О. И., Боков А. В. Применение дистанционных технологий в обучении детей, имеющих ограниченные возможности здоровья. Учебно-методическое пособие. – Кемерово, 2013. – 159 с.

8. American Speech-Language-Hearing Association. “ASHA: How to Help Children With Speech and Language Disorders in Virtual and Modified In-Person Classroom Settings.” https://rb.gy/attuq3

9. Branstetter R. (2020). How Teachers Can Help Students With Special Needs Navigate Distance Learning https://rb.gy/ype5il

10. Courtenay K., Perera B. (2020). COVID-19 and People with Intellectual Disability: impacts of a pandemic. Irish Journal of Psychological Medicine, p. 1-6. doi:10.1017/ipm.2020.45

11. Deschaine, M. (2018). Supporting students with disabilities in k-12 online and blended learning. Lansing, MI: Michigan Virtual University. Retrieved from https://rb.gy/gj7j4d

12. Fleming, Nora. “New Strategies in Special Education as Kids Learn From Home.” Edutopia. https://www.edutopia.org/article/new-strategies-special-education-kids-learn-home

13. Helping students whit autism swich to online learning, Autism Reseach Institute 2019 https://www.autism.org/helping-students-with-autism-switch-to-online-learning/

14. Joseph, Matthew X. and Christine Ravesi-Weinstein. “Helping Students With Special Needs Cope With Remote Learning.” Tech & Learning. https://www.techlearning.com/how-to/helping-students-with-special-needs-to-cope-with-remote-learning

15. Liakou M., Manousou E. (2015). Distance Education For People With Visual Impairments European Journal of Open, Distance and E-Learning 18(1). DOI: 10.1515/eurodl-2015-0005

16. Mayer R. H., Lasky S. K., (2017), School-Based Management of Children with Attention-Deficit/Hyperactivity Disorder: 105 Tips for Teachers

17. Mental health and psychosocial considerations during the COVID-19 outbreak, (2020). WHO. https://www.who.int/docs/default-source/coronaviruse/mental-health-considerations.pdf

18. Miller-Wilson K., Distance Learning Tips for Children With Autism, https://autism.lovetoknow.com/autism-education/distance-learning-tips-children-autism

19. Mitchell C. (2020). Bridging Distance for Learners With Special Needs. https://www.edweek.org/teaching-learning/bridging-distance-for-learners-with-special-needs/2020/09

20. Nelson H. (2020). Special Education Resources for Teachers to Use During Distance Learning https://www.apu.edu/articles/special-education-resources-to-use-during-distance-learning/

21. Reckdahl K. (2020). 5 Ways to Support Kids With ADHD During Remote Learning ttps://www.edutopia.org/article/5-ways-support-kids-adhd-during-remote-learnin

22. Reid Health. “Speech Therapy Tips for Parents to Use at Home.” https://www.reidhealth.org/blog/speech-therapy-tips-for-parents-to-use-at-home

23. Remote Learning for Students Who Are Blind or Visually Impaired (2020). https://www.isbe.net/Documents/B-VI-Ideas-During-Pandemic.pdf

24. Stachowiak, Bonni. “How Can Online Instructors Get Students to Talk to Each Other? EdSurge. https://www.edsurge.com/news/2019-01-09-how-can-online-instructors-get-students-to-talk-to-each-other

25. Teakle N., 2020. 10 Top Tips For Teachers: How To Support Children With Hearing Loss In Online Classrooms https://rb.gy/nhoalj

26. Tips for Helping Students With Hearing Loss in Virtual and In-Person Learning Settings. American Speech-Language-Hearing Association https://www.asha.org/aud/tips-for-helping-students-with-hearing-loss-in-virtual-and-in-person-learning-settings/

27. United States Department of Education. “Supplemental Fact Sheet

Addressing the Risk of COVID-19 in Preschool, Elementary and Secondary Schools While Serving Children with Disabilities.” https://rb.gy/btmjbm

28. Willings C. (2020). Virtual Instruction https://www.teachingvisuallyimpaired.com/virtual-instruction.html